V. Uhlířová
Pavlína a Štěp

Prah 1889

291.33
Uh-13

ԴԱՒԻԹ ԵՒ ՄՇԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՒՑԱՍՊԱՆԱԿԱՆ ՎԷՊ

ԳՐԻ ԱՌԱՒ

Մ. ԱՌԵՂԵԱՆ

ՇՈՒՇԻ

Միրզաջան Մատուսի-Յակոբի եղբայրաց Տպարանում

1889

19 NOV 2010 13 MAY 2005

ԴԱՐԹ ԵՒ ՄՀԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳԻՒՑԱԶՆԱԿԱՆ ՎԷՊ

ԴՐԻ ԱՌԱՔ

Մ. ԱՖԵՂԵԱՆՑ

ՇՈՒՇԻ

Մեսրոպեան Մատենադրի Տպարանի Նպաստաւորմամբ

1889

- .01. 2013

Дозволено цензурою Тифлисъ, 12 Іюня 1889 года.

Типографія Мир. Мугдусіанова въ Шушѣ.

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Մեր բանասէր հասարակութեանն արդէն յայտնի է թէ մեր ժողովրդական բանահիւսութեան մէջ ինչ մեծ տեղ է բռնում Հ. Սրուանձտեանի „Դրոց-Դրոցի" մէջ հրատարակուած „Սասունցի Դաւիթ" կամ „Մհերի Դուռ" կոչուած ժողովրդական պատմական—դիւցազնական վէպը։ Այդ վէպը Հ. Սրուանձտեանի հրատարակութեամբ գրեթէ մի ամբողջութիւն է կազմում, ունենալով իւր մէջ երկու եղբայր Զրամելիքի և Անանասարի, Զրամելիքի որդի Դաւթի և սրա որդի Մհերի պատմութիւնը, թէ պէտք այդ ամբողջութեամբ հանդերձ թերատ է, մանաւանդ Մհերի մասում։

Մեզ դէպ եղաւ Ա. Լիմիածնում դրի առնել այդ վէպի մի ուրիշ վարիանտ, որ լրացնելով առաջին հրատարակութեան թերի կողմերը, փոխել է տալիս վէպի ծաւալի մասին մինչև այժմ եղած հայեացքը։ Ինչպէս երևում է, այս նշանաւոր վէպը մեծ ընդարձակութիւն ունի և չէ ամփոփւում երեք ծնունդի՝ Զրամելիքի, Դաւթի և Մհերի պատմութեամբ, այլ Սասնոյ տէրերի ցեղի պատմութիւնն է դա։ Զրամելիքից և Անանասարից սկսած մինչև անժառանգ և անմահ Մհերը, որով վերջանում է վէպը. Դաւիթը ոչ թէ Զրամելիքի որդին է հանդիսանում, այլ նրա սերունդ պայազատներից մէկը և, պատմողի ասելով, 39-րդ վարմը, որովհետև Զրամելիքից մինչև Մհեր քառասուն վարմ են և ունին իրենց քառասուն ճիւղ առանձին պատմութիւնը, որ քառասուն գիրք կընտեն և կրպատմեն։ Այդ քառասուն ճիւղից (եթէ քառասուն թիւը չափազանց չէ) մենք այժմ ունինք վէպի սկիզբը՝ Զրամելիքի և Անանասարի պատմութիւնը Հ. Սրուանձտեանի վարիանտում (թէ Զրամելիքն և Անանասարը վէպի սկիզբն են, այդ երևում է և մեր վարիանտից, որի մէջ ողորմիսում նրանց անուններն ամենից առաջ են ասուած)։ Դաւիթ (Թլոր մականուանուած) և Մհեր. բացի այդ՝ մի հատուած Թոլան Դաւթից, և երկու հերոսի միայն անունները՝ Խաղդասար և Մել-

քիսէթ քահանայ, որոնք բոլորովին նոր են։ Սասնու և Սասրայ քաղաքի տէրերի միջև, ինչպէս երևում է, տեղի է ունենում մի ժառանգական կռիւ։ Զրամելիքը (Հ.Սր. վարիանտով), Մելոլան Դաւիթը, Մելոր Դաւիթը կռուում են Սասրայ տէրերի, Սասրայ մելիքների հետ և Սասրայ մելիք (Սասրամելիք) կոչումը ոչ թէ յատուկ անուն է դուրս գալիս, այլ Սասրայ քաղաքի իշխողների հասարակ կոչումը։

Այ էպի այս նոր վարիանտը ոչ միայն լրացնում է Հ. Սրուանձտեանի հրատարակութիւնը, այլ մանաւանդ թէ ինքն ևս մի գեղարուեստական ամբողջութիւն է կազմում, որ ունի իւր առանձին արժանաւորութիւնները։ Սանրամասն քննութիւնը։ և այս վարիանտի համեմատութիւնը Հ. Սրուանձտեանի վարիանտի հետ, ուրիշ ժամանակի և տեղի թողնելով, այստեղ այսքանը միայն կասենք, որ մեր վարիանտն ևս Դաւթի կեանքից ունի շատ վիպական մանրամասնութիւններ, որոնք իրենց վրայ կրում են հնագոյն դիւցազներգութեան կնիք. սրանում երևում է աւելի միջին դարերի հայոց պատմական կեանքը, մանաւանդ աւելի հարուստ է ընտանեկան կեանքի նկարագրութեամբ դիւցազնականի հետ միասին։ Մնէ գլխաւոր և թէ երկրորդական հերոսների բնաւորութիւնները որոշ են և գեղարուեստօրէն պահպանուած. չկայ մի այնպիսի արարք, որ գլխաւոր հերոս Դաւթի բնաւորութեան հակառակ լինի. նա միշտ բարի է, հեզ, արդար, ուխտապահ, սիրող, դիւցազնաբար քաջ ու զօրեղ, թշնամիների համար ահ ու սարսափ, և իւր հայրենի ոեպհականութեան համար մահու չափ պաշտպան։

Դէպի շարը միտուած անհուն ոյժի ներկայացուցիչ Սասնոյ պատմութիւնը, ինչպէս և մի քանի հերոսներ և հերոսուհիներ, գրեթէ ամբողջ նոր է մեր վարիանտում (Հ. Սր. վարիանտում Սասնոյ մասին շատ քիչ բան կայ պատմուած), թէպէտև պէտք է ասել, որ Սասնոյ պատմութիւնը դարձեալ անթերի չի կարելի համարել, ինչպէս Դաւթի պատմութիւնն է։ Այդ երևում է պատմութեան քնթացքից և նոյն իսկ պատմողի վկայութիւնից թէ նա աւելի լաւ էր իմանում Դաւթի պատմութիւնը, քան Սասնոյինը։

Սասնոյ պատմողը մի մոկացի հայ էր, Սոկաց Դինեկանց դիւղից, Ղահապետ անունով, այն հազարաւորներից մէկը, որոնք ազգա-

տութիւնից ստիպուած աշխարհի ծայրերն են շրջում։ Դամի բարի քրիստոնեայ մարդ էր, որ ամենայն սրբութեամբ էր վերաբերւում դէպի իւր պատմածը, որին հաւատում էր թէ ամբողջապէս կատարուել է մի ժամանակ. „Այժմ էլ, աւելացնում էր նա, Սատայ քաղաք շատ կարիճ փէհլուան կայ։“ Դա իւր լաւ չիմացածը չէր ուզում ամենևին պատմել, որովհետև, ինչպէս երևում էր, մեղք էր համարում այս պատմութիւնը խառնելը։ Անդան Դաւթի մի հատուածը, որ վերջից ենք գրել, մեծ դժուարութեամբ նրան պատմել տուինք և, ինչքան էլ ստիպեցինք, սրբիչ աւելի բան չկարողացանք պատմել տալ, թէպէտև շատ ցանկալի էր, որ գոնէ մի մի կտորներ ևս Խաղդասարի և Մելքիսէթ քահանայի ճիւղերից ունենայինք։

Այն վարիանտի լեզուն, ինչպէս ընթերցողը կրտեսնի, շատ սահուն, կտրուկ և վիպական–բանաստեղծական է. ոճը կենդանի պատկերաւոր և ներդաշնակ։ Ատանաւորի նկատմամբ պէտք է ասել, որ սկզբում ոտանաւորով էինք գրել միայն այն կտորները, որոնք մոկացին ոչ թէ արտասանում էր, այլ միշտ երգում մի առանձին եղանակով, որ դժբախտաբար չյաջողուեցաւ մեզ ձայնագրել տալ։ Բայց միանգամ արդէն տպագրութեան համար պատրաստելուց յետոյ, ինչպէս առաջ ևս շատ տեղ նկատել էինք, տեսնելով՝ որ վէպը գրեթէ ամբողջապէս ոտանաւորով է դուրս գալիս այն չափով, ինչ չափով որ միջի երգերն են յօրինուած, աւելի լաւ համարեցինք տողերի բաժանել և ոտանաւորի ձևով հրատարակել։ Մեր աշխատանքը միայն նրանում է եղել, որ շարադրութիւնը լոլորով ին անփոփոխ թողնելով, տողատել ենք։ Այս տողատութիւնը տեղ կայ շատ յաջող է, տեղ կայ թոյլ է. թուլութիւնը յառաջացած պիտի լինի անշուշտ նրանից, որ պատմողը՝ ոտանաւորը մոռացած լինելով խառնել է։ Այն տեղերը, որոնք շատ են խառնուել և որ առանց շարադրութիւնը փոխելու տողատելը դժուար է, արձակի ձևով թողեցինք։ Տողատելու գլխաւոր հիմք ենք ընդունել այն, որ ժողովրդական ոտանաւորների մէջ սովորաբար իրարանչիւր տողում լրանում է մի միտք, ինչպէս և հէնց վէպի երգերի մէջ ևս նոյնը տեսնում ենք։

Տողերի մէջ վանկերիթիւը ամենաշատը 13 է (շատ քիչ անգամ

14 էլինում), իսկ ամենաքիչը 6. երբեմն պատահում է հինգ վանկանի տող, բայց այդ հինգ վանկն ընդհանրապես իրենից առաջ կամ յետոյ ունենում է մի կարճ տող, որի հետ միանալով դարձնում տալիս է մի երկար տող։ Սակայն ոտանաւորի համար այստեղ նշանակութիւն ունի ոչ թէ վանկերի թիւը, այլ ձայների երկայնքը և ոտքերի (стопа, pes) թիւը, որ լինում է 3—6 ոտք։ Մեն մի ոտք բաղկացած է երկու կամ երեք վանկից և շեշտը սովորաբար վերջին վանկի վրայ ունի. որով եւ ամբողջ ոտանաւորը յօրինուած է ձայնական (շեշտական, тоническій размѣръ) չափով եւ կազմուած է մեծավերջ (ямбъ) և վերջատանջ (анапестъ) ոտքերի խառնուրդից՝ երկար և կարճ տողերով։

Աւելի պարզելու համար բերենք օրինակներ թէ երգերից և թէ միւս տեղերից։

Սով քնի՛ր էք՝ յարթո՛ւն կայէք.	8 վանկ.	3 ոտք.
Սով յարթուն էք՝ ելէ՛ք կայնեցէ՛ք.	9 „	3 „
Սով կայնի՛ր էք՝ ձի՛ ձակե՛ր կապեցէ՛ք.	10 „	4 „
Սով ձի՛ ձակե՛ր կապի՛ր էք՝ ձի՛ ձիա՛նք թամքեցէ՛ք.	13 „	6 „
Սով ձի՛ ձիա՛նք թամքի՛ր էք՝ ելէ՛ք խնծեցէ՛ք.	12 „	5 „
Ձասէ՛ք Դաւիթ գեղո՛ղ էկաւ, գեղո՛ղ գնաց։	10 „	4 „

Օրդնա՛լ բարեբար Աստուած,	7 վանկ.	3 ոտք
Ինչ հրամանքն էր շա՛տ.	5 „	2 „
Այս ինչքա՛ն անեմ։	5 „	2 „
Նոնք էլնե՛ն բամբա՛կ,	6 „	3 „
Այս լէ էլնե՛մ կրա՛կ,	6 „	3 „
Ձեմ կարա՛յ գանո՛նք էրե ցըցի.	9 „	4 „

Ինոնք էլնեն գարնան մասպաշ գառներ,	10 „	5 „
Իսլէ՛ էլնեմ գարնան քաղցած գէլեր,	10 „	5 „
Ամ կասայ գանոնք կոլե՛ ցրցի՛,	9 „	4 „

Ուրիշ օրինակ ոչ երգերից.

Մարայ մելիք զապանասի սարա՛,	11 վանկ.	5 տող.
Տարա՛ եղի զա՛որ ան՛գ մընչ գաշաին.	10 „	4 „
Ինոնք փէհլը ընքան՛ր գնացին գեորգ խաղալու՛,	12 „	5 „
Մարայ մելիք հընչ գիր գեորգ եզար,	9 „	4 „
Դաւ՛թ էլաւ, կայնաւ,	6 „	3 „
Ձեռ եռաւ, զէնոր գեորգբանե՛ց,	8 „	3 „
Մարայ մելիք շատ ըրկաւ, ասաց.	10 „	4 „
Ա՛ երջ՛ն ախր էսա՛ ան՛ելնի խեստ՛ի կսի՛ անի՛,	13 „	6 „
Ը՛սի՛ կ էրաւ, էկաւ ասն.	7 „	3 „
Մաղէն կախե՛ց, էլ չը խօսաց,	8 „	4 „

Ձէ՞ սի՛ւ էլէ յախուց իմ բարև՛ ասա՛ր. 10 „ 4 „
Թըլեն՛ս էլէ յախուց քիզ բարև՛ ասամ։ 9 „ 4 „
Որ սի՛ւ յախուց իմ բարև՛ չասնէ՛ր, 9 „ 4 „
Ն՛ելնէր կեսլընկնէ՛ր իմ սի՛ր ձի սպանէ՛ր։ 10 „ 4 „

Շատ անգամ պատահում է տողի մէջ մի երկար վանկ, որ հաւասար է լինում երկու վանկից կազմուած մի տոքի. օրինակ.

Ան պո՛ղ վրակ սո՛ղ կոտրուի՛ր։
Ան պո՛ղ վրասէ՛ կո՛ւ էլէ մնշուի՛ր։

Տողի վերջում իգական (անշեշտ) տոքերի մի վանկից բաղկա-

ցած, քիչ են պատահում, ինչպէս և տողը շատ քիչ անգամ է սկըսւում շեշտաւոր վանկով։

Յոնից պակաս վանկ ունեցող տողերը սովորաբար հատած (цезура) չունին, իսկ երկար տողերը՝ մոքին նայելով՝ որև է բառի վրայ հատած ունին ընդհանրապէս։ Ինչպէս.

Ա՛ով ձի՛ ձիանք թամքիր էք՝ | ելէք, խնծեցէք։
Ա՛երջին տիր էսա տ՝ելնի, | խետ ձի կռիւ անի։
Ա՛ւրախութենէ | խնձոր մ՝եզար Դաւթին։
Ա՛սրայ մելիք ըմեն օր | կ՝երթայ գեղոյզ խաղալու։

Տողերի վերջում յանգերի նմանաձայնութիւնը, եթէ կան տեղ տեղ, պատահական է։ Այն իսկ երգերը անյանգ են։

Լ— ուշադրութիւն դարձնողը կըտեսնի, որ արդի ժողովրդ. վէպի այս ձայնական տաղաչափութիւնը, որ բոլորովին նոր է մեր բանահիւսութեան մէջ, շատ մօտ է մեր հին հեթանոսական վէպերի չափին (երկնէր երկին. և միւս հատուածները Խոր. պատմ.մէջ)։ Վերջիններս անշուշտ սոյնպիսի տաղաչափութեամբ են յօրինուած եղել, հիմք ունենալով թերևս շեշտի և բութի (անշեշտ վանկ) փոխանակ երկար ու սուղ ձայնաւորները։ Այս նմանութիւնը ցոյց տալու համար բաւականանանք միայն մի կտորով։

Հեծա՛ւ | արի՛ | արքայն | Աղուաշէս՝ | ի սեա՛ւըն գե | ղեցի՛կ.
—15 վ. 7 ոտք.
Յ՝ հանեա՛լ զոսկէօ՛ղ շիկափո՛կ | պարանն, —11 „ 4 „
Եւ անցեա՛լ | որպէ՛ս | զարծուի | սրաթև՛ | ընդ դի՛ան,
—11 „ 5 „
Եւ ձգեա՛լ զոսկէօ՛ղ շիկափոկ պարանն, —11 „ 4 „
Ընկէ՛ց | ի մէջ | օրի՛ | որդի՛ն Աղանա՛ց. —11 „ 5 „
Եւ շտա՛ցաւեցոյց | ըզմէ՛ջ | փափուկ | օրի՛ | որդի՛ն, —13 „ 6 „
Աղրա՛գ հասուցեալ | ի բանա՛կըն իւր։ —10 „ 4 „

Իսկ ինչ որ վերաբերում է գաւառական արտասանութեանը, պէտք է ասել, որ մոկաց բարբառը, որ մի տեսակ քաղցրահնչիւնութիւն ունի, միայն մեր արդի տառերով ճշգրութեամբ գրի առնելը մեծ դժուարութիւն է ներկայացնում, որովհետև ձայնաւորներն երբեմն խիստ փափկանում են, երբեմն շատ բութ ու խուլ կերպով արտասանւում, այնպէս որ մարդ լաւ կերպով չէ ըմբռնում թէ ինչ հնչիւն է դուրս գալիս։ Մի՛ւնոյն ձայնաւորը, մինչև անգամ մի բառի մէջ, երբեմն կարճ է արտաբերւում, երբեմն երկար. օրինակ հէնց „ասաց,“ „արեց“ բառերի մէջ, որ շատ են պատահում, առաջին ա—երը սուլ են և բութ։

Հնչիւնների ճշգրիտիւնը, ինչքան մեր այբուբենով կարելի էր արտայայտել, պահեցինք. թողեցինք մի քանի ձայնաւորներով մի հնչիւն արտայայտելը, որ սովորական է մեր գաւառական բարբառներով գրողներին (ինչպէս՝ նա, էա—փափուկ ա. ի—Ա ուսաց եայլն), ի նկատի ունենալով, որ գրութեան այդ եղանակը պիտի դժուարացնէր ընթերցողներին՝ լեզուն հասկանալ. մանաւանդ որ, ճիշդ ասած, այդ ձևերով իսկական հնչիւնը դարձեալ անորոշ է մնում. և մենք իսկ՝ լաւ տեղեակ չէ՛ինելով մոկաց լեզուին, կարող էինք սխալների մէջ ընկնել։

Կարելի՞ չէ ասել թէ մեր վարիանտի լեզուն բոլորովին մաքուր մոկաց բարբառով լինի, ի նկատի առնելով. որ պատմողը երկար տարիներով պանդխտել է շատ տեղեր։ Վ՚էպի մէջ շատ են պատահում խոնարհումների կրկնակի ձևեր. օրինակ՝ առաւ-առեց, տուաւ-տուեց, արաւ-էրաւ-արեց-էրեց, եքից-քցեց, և այլն, որոնք, հարկաւ, կանգան բարբառների ազդեցութեան տակ լինելուց են ծագել։ Բայց և այնպէս, պէտք է ասել, որ մի անգամ գրի առնելուց յետոյ, երբոր նորից պատմել տուինք, նա գրեթէ բառացի պատմեց մի անգամ արդէն պատմածը, որ գրել էինք, բացի մասնաւոր բառերի փոփոխութիւններից։

Մի՛ր խօսքի վերջում աւելորդ չի լինիլ ասել, որ՝ շնայելով վերջին ժամանակներս բաւական զգացւում է ժողովրդական բանահիւսութեան արդիւնքները հաւաքելու կարևորութիւնը. բայց և այնպէս մեր հասարակութեան հասկացող մասը մի առանձին ուշք չէ

դարձնում այս բանի վրայ, և սոյն վէպի նման ով գիտէ քանի վէպեր կորչում են, և շատ շուտով ժամանակ կըգայ, որ արդէն ուշ կը լինի այսպիսի վէպեր գրի առնելու հնարաւորութիւնը։ Մոկացու ասելով իրենց Մոկաց երկրում անգամ քիչ մարդիկ, այն էլ միայն ծերերից, գիտեն այս մեծ վէպից հատուածներ, իսկ քառասուն ճիւղն ամբողջ մի հոգի լաւ իմացող, այդ խօ շատ հազուագիւտ է։ Մեր մոկացին իւր կեանքի մէջ միայն մի մարդու է հանդիպել, որ քառասուն ճիւղն ևս իմացել է և պատմել է իրենց գիւղում, երբոր ինքը դեռ երիտասարդ է եղել. իսկ այդ մարդն ևս գնացել է Կ. Պոլիս և այլ չէ դարձել։

Ա. Ա.

ԹԼՕՐ-ԴԱՒԻԹ ԵՒ ՄՀԵՐ.

ԴԱՒԻԹ

Ա.

,, Դառնամ զոգորմին տը 2) տամ Աբամելիքին,
Դառնամ զոգորմին տը տամ Սանասարին,
Դառնամ զոգորմին տը տամ Բագդասարին,
Դառնամ զոգորմին տը տամ Մելքսէթ քհանին,
Դառնամ զոգորմին տը տամ Զէնով-Յովանին,
Դառնամ զոգորմին տը տամ Յռան-Վերգոյին,
Դառնամ զոգորմին տը տամ Թռլան-Դաւթին,
Դառնամ զոգորմին տը տամ ականջէրոզի Հայրի-մայրին։ 1)"

Դաւթի խէր 3) կըմեռնի,
Մէր կըգնայ զՄորամելիք կառնի,
Դաւիթ կըմնայ հէթը մ։ 4)
Խրոզրէրներ կրկեան, իրարու կ'ասեն.
Զէնով-Յովան կ'ասի.
. . . . Վերգо, տէ՛ւ 5) կրտանես զԴաւիթ,

---

1) Պատմողը երգով գառնում, անցնում նշանաւոր հերոսներին ոգորմի է տալիս, որ նոր իւր պատմութիւնն անի։ Նրա ասելով ոգորմիսի մէջ յիշւում են բոլոր նախորդ նշանաւոր հերոսների անունները, բայց ինքը բոլորը չէ մատնանշում։ 2) տը։ — պիտի, կը (մասնիկ)։ 3) Հ. տաւը և այ. երկրաբրառը սովորաբար խ. և ֆ. են փոխւում։ 4) տը։ 5) իւ. երբեմն հնչում է իբրև Ֆրանս ա։

Եօխսա [1]) ես կըտանեմ։
. . . . Վերգօ կ'ասի.—Ես սրգի ունեմ,
Տիւ տար, սպախէ, էրէ քե սրդի։
Էնի կըտանի, կը սպախի զԴաւիթ,
Կ'անի իրան Հոգեզաւակ։

Մէ ամիս կըմնայ, մօր սիրտ կրար [2]) չի տայ.
Կըխրկի, զիրան տղան տանի մօտ յինք։
Որ գերեխէն կըտանի մօտ [3]) յինք,
Մսրամելիք ըմեն օր կ'երթայ գեորգ [4]) խաղալու։
Մէր կ'ասի Մսրամելքին.
— Իմ էրեխէն տար խետգ։
Մսրամելիք կ'ասի. — Ես չեմ տանի,
Որ տանեմ, գեորգ կըգպնի, կըսպանի,
Խալխը-մարդիկ տ'ասեն՝ մախսուզ [5]) զար սպանեց։
— Տիւ տար, իմ էրեխէն չլայ, թը [6]) սպանուի։
Մսրամելիք զտղան առեց տարաւ,
Տարաւ, եգի զատր [7]) տեղ, մընչ [8]) դաշտին.
Էնոնք՝ փէհլուընքտեր՝ գնացին գեորգ խաղալու։
Մսրամելիք հընչ [9]) զիւր գեորգ եզար,
Դաւիթ էլաւ, կայնաւ,
Գեռ ետուր, զէնոր գեորգ բռնեց։
Մսրամելիք շատ ըռըկաւ, [10]) ասաց.
— Վերջին տիր [11]) էսա տ'ելնի, խետ ձի [12]) կռիւ անի։
Ռուիկ էրաւ [10]), էկաւ տան.
Մաղդէն կախեց, [13]) էլ չխօսաց։

---

1) թէ, 2) գաղաբ. 3) նախդիրները սովորաբար նախադաս են գրուում 4) գուրգ, ըսխա. 5) կամաւ. 6) թը, թըխ—թոզ. թը—թէ, եթէ 7) հեռու 8) մընչ. մընչ—մէջ. 9) հընչ. ինչ—երբոր 10) դայրացաւ. 11) անգամ 12) ձի. ձը—ինձ. ձի, ձիր—ձեր, ձի, ձիզ—ձեզ։ 13) նօթիերը կիտեց։

Կնիկ խարցրեց, ասաց.
— Մսրամելիք, տիւ ինչու էսօր չրս խօսայ։
Ասաց. —Ցիմ տը խօսամ.
Քես տղէն ձի շատ ամօթով էրաւ մընչ խալխին։
Կնիկ ասաց. —Ցիմնչ էրաւ։ —
— Ես իմ գեորգ որ չարդեցի [1]),
Ձեռ ետուր, գիմ գեորգ բռնեց։
— Բան չկայ, տղայ է, ասաց, խելք բան չը կտրի։
Մսրամելիք ասաց.
— Որ էն տղայ է, խելք բան չը՛կտրի,
Բերենք, մէկ սէնի [2]) ոսկի գնենք էռջև,
Մէկ սէնի լէ [3]) կրակ գնենք էռջև.
Թը էն տղայէ, խելք բան չըկտրի,
Ձեռ կըտայ տախ [4]) կրակը, չի՛ տայ տախ ոսկին։

Մէկ սէնի կրակ, մէկ սէնի ոսկի,
Բերին, գրին յէռջև Դաւիթին։
Դաւիթ ձեռ ետաւ տը տանէր տախ ոսկին.
Ասծու Հրամանքիւ՝ Հրեշտակ ձեռ կանեց [5]), ետու կրակին։
Էնու մատ էրիցաւ, կրակ կպաւ մատին.
Ետու լեզուին՝ լեզուն էլ էրիցաւ.
Որ լեզուն էրիցաւ՝ լալ էլաւ քիչ,—
Անուն գրին Թլօր [6]) Դաւիթ։

Բ.

Մսրամելիք էլ չսպախեց զ՝Դաւիթ.
Էնու մէր ճամբխեց, էկաւ մօտ խրօղբէր։

---

1) ձգեցի։ 2) սէնի, [illegible] 3) էլ 4) գէպի 5) շուռ տուաւ, գարձրեց
6) թլուաւ։

Խրոզրէր մէկ պողվրտէ սօլ [1]) ետու կարել,
Մէկ էլ պողվրտէ կօռ [2]) ետու շինել,
Էլաւ զԴաւիթ էրաւ գառնարած։
Դաւիթ էլաւ զպողվրտէ սօլ խագաւ,
Զպողվրտէ կօռ բռնեց ձեռ,
Գառներ արեց յէռջև, տարաւ դաշտ։
Գառներ եթող մընչ դաշտին,
Ընցկուն [3]) աղուէս կէր [4]), լպստրակ, գէլ,
Էն տեսակ տեսակ ջանաւարներ,
Եբեր, ըլից մընչ գառներուն,
Արեց յէռջև, յիրկուն եբեր քաղաք։
Քաղքցիք՝ որ տեսան՝ վախացան,
Դռներ փակեցին, տիւրս չելան։
Դաւիթ լէ գլոխ եդի գետին,
Ինաւ էնտեխ՝ քաղքու քամակ՝ մընչ հանդին։
Խլիսուն [5]) Զէնով-Յովան գնաց մօտ Դաւիթ.
Տեսաւ՝ ընցկուն մուն էկի սարեր,
Էն պողվրտէ սօլ կտրտուիր ի,
Էն պողվրտէ կօռ լէ մաշուիր ի։
Ասաց. — Դաւիթ, քեռ բան ինչպէսն ի
Ասաց.—Խրոզրէր, էն սիւ [6]) ուլեր օխնած ին,
Էն բոզրալակ [7]) ուլեր անիծած ին,
Էնոնք ձի շատ կըչարչրեն։
Խրոզրէր ասաց.—Էն բոզերի յետև մի էրթայ.
Էնոնք անիծած ին,
Որ մէ կըմնայ՝ էն ըի։
Մէկ 'լօր խրոզրէր զԴաւիթ արեց նախրորդ։
Դաւիթ էլ ըմ գնաց սար.

---

1) կոշիկ. 2) Հովուական յուպ։ 3) այնքան, ինչքան, այնպէսինչպէս 4) կոր։
5) լուսադէմին 6) սև։ 7) գոբշագոյն ուլեր։ այսինքն նաղասաակներ։

4) ուլիր (Ղարաբաղ), հոգ. տեսակ, որ հիշվում է Հայոց հին գրքերում։ 5) տ. հ. 22, 27, 52 278, Ղազ. 1)

Ընցկուն արջ կէր, շէր 1), պլբնկ 2), գէլ,
Երեր, ըլլից մընչ նախրին,
Արեց լեռջև, յիրկուն երեր քաղաք։
Քաղքցիք վախացան, տիւռ չրացին։
Դաւիթ գլխ եդի, քնաւ չուր 3) խլխուն։
Խլխուն քաղքցիք գնացին մօտ Ձէնով-Յովան,
Ասացին.— Ձէնով-Յովան.
Քեռ տղէն միր քաղաք աւրեց,
Մենք կը վախնանք էստ գէլերաց,
Արջերաց, լայտարակներաց։
Որ էնպէսն ի, ասաց Ձէնով-Յովան,—
Կ'երթամ, զ'Դաւիթ բերեմ տան։
Գնաց մօտ Դաւիթ, առեց եբի տան։
Խացի բալնիս, կերակրի բալնիս,
Ետու Դաւիթին, ասաց.
—Ինչ մէյվան 4) կրկեայ՝ 5) խաց կրտաս.
Կ'ուտի՝ ճամբխու կրդնես։

Գ.

Մէկ ամիս վրայ ընցաւ ընցկուն, էրկու.
Զասես Ձէնով-Յովանի կնիկ՝ Սաւիէն—
Դաւիթ շատ սիրուն-խօրօտ 6) տղայ էր—
Գեաղտիկ աչք եդի Դաւիթին, ասաց.
— Տը կեաս խետ իմ ձեռաց։
Դաւիթ ասաց.—Խրօղբօր կնիկ,
Տիւն իմ մէրն ի, ես լէ քեռ որդին իմ։
Խրօղբօր կնիկ ասաց՝ Տանեմ, գլուխ լուամ,
Դաւիթ կեայ ճիւր լցի վալ 7) իմ գլխուն,

1) շէր (շիրՀ) [illegible] 2) պլբնկ (փալանգՀ) վագր. 3) Մինչև. 4) Հիւր.
5) կրգայ 6) գեղտիկ. 7) վրայ.

Որ Դաւիթ իմ լէշ [1]) տեսնայ,
Էնու սիրտ մեղաւորնայ,
Կեայ խետ իմ ձեռաց։
Էլաւ ճիւր առեց, տարաւ.
Զ'Դաւիթ կանչեց, որ կեայ ճիւր լցի։
Դաւիթ գիւր աչքեր բռնեց,
Որ խրօղրօր կնիկ չտեսնէր, սիրտ մեղաւորնէր.
Ու ընցկուն ճիւր ըլից խրօղբօր կնկան գլխուն։
Խրօղբօր կնիկ որ զգլոխ լուաց,
Էլաւ, իրիշկեց [2]), աեսաւ,
Որ Դաւիթ գիւր աչքեր պինդ բռնիր է.
Էլաց, էտու գլխուն, իւր իրես արընեց,
Մազեր քրքրեց վար գլխուն,
Գնաց յիւր տան նստաւ,
Զուր էնու մարդ Զէնով-Յովան էկաւ։
Ասաց.—Հէ կնիկ, ինչ էլի [3]) քեզ։
Կնիկ ասաց.—Յի՞նչ տելնի.
Ես գիտէր՝ որ տիւ ձի որդի էր բերի.
Ես չիմ գիտի՝ որ տիւ գնացիր ես, ձի էրիկ ես բերի։
Զէնով-Յովան ասաց.
— Հէ կնիկ, ընցկուն չէ, տիւ սուտ կ'ասես։
Կնիկ ասաց.—Ես սուտ չեմ ասի.
Էլաւ ձեռ եթալ [4]) տախ ձիս.
Ես էնոր խարար չարի [5])։
—Որ ընցկուն է, յիրկուն տիւռ կըշինենք։
Յիրկուն Զէնով-Յովան տիւռ շինեց,
Զեթոզ Դաւիթ գէր տան։ Դաւիթ ասաց.
—Խրօղբէր, մկայ [6]) կարամ քացի մ' զարկեմ քեռ տիւռ,
Տիւ լէ, քեռ տիւռ լէ երթէք գնանի տակ յանդիւնդք։

---

1) Սաղմ. գէշ. 2) Նայեց. 3) Ի՞նչ է եղել 4) Ձգեց. 5) չնամբերեցի 6) այժմ։

Համա ինչ անեմ, խօրախուր խրօղբէր,
Համա բոզու խարած իս։

Դ

Դաւիթ էլաւ նետ ու անեղ իմ շինեց լիւր [1]),
Գնաց մընչ գաշտին նէճիր [2])։
Ցրմեն օր նէճիր կանի,
Լիւր, ճնճղուկ կը սպանի,
Ցիրկուն կրկեայ, կ'երթայ մէկ պառաւու տուն։
Էն պառաւ լէ Դաւթի խօր եար [3]) կէնի։
Պառաւ մէկ օր կ'ասի.
—Դաւիթ, տիւ ընչու՞ կերթաս մըչ իմ կորկին,
Մըչ իմ կորկին նէճիր անես, իմ կորեկ սխկես [4])։
Դաւիթ կ'ասի. —Հրպտ ինչ անեմ։
—Ինչ անես.-քեռ խօր շատ թագաւորութիւն ունէր,
Քեռ խօր շատ մալ ապրանք կէր.
Քեռ խէր մեռի՝ չուր'ս տարի [5])
Մսրամելքի խարջ [6]) չի տուած քեռ խրօղբէր.
Մկայ Մսրամելքի ճամբէն,
Եօթ տարուան խարջ կուգի.
Քեռ խրօղբէր կըտայ եօթ տարուան խարջ։—
Դաւիթ քնաւ չուր խլիսուն։
Խլիսուն էլ իմ նետ ու անեղ առեց,
Գնաց, ընկաւ մըչ պառաւու կորկին, լիւր սպանեց։
Մսրամելքի էլչին [7]), անուն Կոզբաղին էր,
Էկաւ զխզնի [8]) տիւռ եբաց,
Զխզինէն չափէր, ասնէր։
Պառաւ էլաւ, գնաց, տեսաւ,
Որ Դաւիթ էնոր կորկին լիւր կըսպանի։

---

1) Իրեն. 2) [illegible] 3) [illegible] այս տարի. 6) Հարկ.
7) դեսպան 8) գանձի։

Ասաց.—Դաւիթ, գլուղս քե տանի.
Եան եմ, էտա մէկ արտ կորեկ.
Տիւն իմ ապրուստ կորեցիր։
Որ տիւ կորիճ ես՝ արի, դնա.
Մարամելքի էլչին, անուն Կոզբադին,
Չկի, քեռ իսոր խզինէն չափի, տանի.
Դաւիթ ասաց.—Պառաւ, որտեղն ի, ձի տար շանք տուր 1)։

Պառաւ առեց, տարաւ զԴաւիթ.
Թող էտու էնտեղ, էկաւ։ Դաւիթ տեսաւ,
Որ Կոզբադին խզինէն կը չափի, տանի։
Որ Դաւիթ տեսաւ,
Բարկուիթնէ արիւն լցաւ աչքեր.
Խերստաւ 2), ասաց.
—Կոզբադին, իլի վիր, ես չափեմ։
Կոզբադին չկայնաւ։
Դաւիթ ձեռ ետու, զէնու ճիւ 3) բռնեց,
Էնտեղէն քցեց չուր դուան։
Նստաւ զչափ կործեց 4) գետին.
Զվոսկին ըլից վար չափու ուան.
Փէտ ետու վար չափու ուան.
Զվոսկին ըլից գետին,
Մէկը չթողուց վար չափին։
Փարտակ չափ եթալ մրչ ջուալին, ասաց՝ Էս մէկ։
Կոզբադին ասաց.
—Զէնով-Ցովան, էսա տղէն տարէք գէն։
Կրտաս՝ տուր օխտը տարուան խարջ.
Թը չէս իտար, կ'երթամ Մարամելքին կ'ասեմ,

---

1) ցոյց տուր։ 2) բարկացաւ, 3) թև 4) շուռ տուաւ։

Կըկեայ, Սասմայ քաղաք աւրի, տանի,
Մարայ քաղքի քամակ նոր քաղաք ըմ շինի։-
Դաւիթ լէ խերսոտեց, կայնաւ,
Զչափ եզար Կոզբադնի ճակատ, գլոխ կոտրաւ։
Կոզբադնի պոկտեր [1]) կտրեց,
Ատամներ լէ քաշեց, բվռնեց [2]) ճակատ, ասաց.
—Գնա ջուհաֆ [3]) տուր քեռ Մսրամելքին,
Ինչ կանի, թրխ անի։

Ե

Կոզբադին էլաւ,
Մազդէն էնելով գնաց մօտ Մսրամելիք։
Կնկտեր զատն տեղաց տեսան զԿոզբադին,
Որ բերան բաց կը ծիծղայ.
Ասացին՝ եօթ տարուան խարջ բերիր, կըկեայ։
Որ Կոզբադին գնաց, մօտացաւ,
Տեսան պոկտեր կտրած,
Ատամներ քաշած, բվռնած ճակտին։
Կնկտեր ասացին.
—Կոզբադին, յու՞ստ կըկեաս լերան-լերան։
Կոզբադին ասաց.
—Մ'ասէք՝ Կոզբադին, յուստ կըկեաս լերան-լերան,
Վաղ Սասմայ տեխաց [4]) խեղեղ կ'ելնի.
Ձիր էրկտերու .... կ'էնէք եղ-չորթան։
Կոզբադին գնաց մօտ Մսրամելիք, ասաց.
—Մսրամելիք, Դաւիթ գեօթն տարուան խարջ չետուր,
Ասաց՝ քեռ Մսրամելիք ինչ կանի՝ թրխ անի։—
Մսրամելիք զտալ [5]) եքից քաղաք,
Կանչեց ասքեար [6]) ժողվելու, ասաց

1) շրթուքներ։ 2) բեռեռեց, մխեց 3) պատասխան, 4) կ[illegible] 5) մուներիկ։ 6) զօրք։

„Թը ժողվի՛մ խազար խինգ խարիր խամար 1)
Նորալիւկ մանուկ (Էր 2).
„Թը ժողվի՛մ խազար խինգ խարիր խամար
(Լ.ա 2) Բեղդար տղայ (Էր).
„Թը ժողվի՛մ խազար խինգ խարիր խամար
(Լ.ա) Թուխ մօրուս (Էր).
„Թը ժողվի՛մ խազար խինգ խարիր խամար
Սվտակ մօրուս (Էր)։"

Ասաց, ժողվեց, զրմեն ֆիօփ էրաւ,
Ասքեար կապեց, էկաւ վար Սասմայ քաղքին։
Մընչ գաշտին զիւր չագրը-խեաթ 3) եզար,
Զուտ՝ափ խրկեց Զէնով-Յովանին։
Ասաց.—Զենով-Յովան,
Իմ եօթ տարուան խարջ կըտաս՝ տու խաֆրով.
Թը չես ի տայ, կըկեամ Սասմայ քաղաք աւրեմ,
Տանեմ Մսրայ քաղքի քամակ նոր քաղաք շինեմ։
Զէնով-Յովան ասաց.
—Մենք չենք կարայ կռիւ անի,
Թը կռիւ անի՝ Դաւիթն է.
Կայնէ՝ Դաւիթին խարցնենք։
Դաւիթ ասաց.—Ես չեմ ի տայ իմ խօր խզինէն.
Ինչ կանեն՝ ֆիրխ անեն։
Զէնով-Յովան Դաւիթին ասաց.
—Դաւիթ, որ ընցկուն ի,
Էս գշիր կըկեան, ֆլին 4) վար մեր քաղքին աւրեն։
— Խրօղբէր, տիւք գնացէք, ձիր տան քնէք.
Ես կ՚երթամ կռիւ անեմ խլիսուն։
Խրօղբոր կնիկ չանայ ետու Դաւիթին, ասաց.

---

1) Այս կտորը նրգ է։ 2) Էր, լա՝ երդի չափը լրացնող բացագանչութիւններ։
3) վրանները։ 4) յարձակուին։

— Դաւիթ, որ կերթաս կռիւ անես,
Զ Սարամելիք սպանես,
Էնու ձախ . . . քի՛ անենք մեր աչից գեղ։

Զ.

Ընցկուն Դաւթի հէրս էկաւ,
Էլ գշիր էնոր քուն չտարաւ։
Իլիսուն էլաւ գիւր նետ ու անեղ առեց, գնաց։
Որ էլաւ գնալ, պառաւ ասաց.
—Դաւիթ, լուր տ՛երթաս։ Դաւիթ ասաց.
—Տերթամ Սարամելքի կռիւ անեմ։
—Տիւ ինչ ունիս,նետ ու անեղով տ՛երթաս,
Սարամելքի կռիւ անես։
—Հրպա՛ ինչ անեմ, ձի չունիմ, թուր չունիմ։
Պառաւ ասաց.—Գրողս քի տանի,
Ափսոս չէր տիւ էն խոր տղէն ըլնես։
Քեռ խէր ունէր „Ֆուռկիկ-Զալալին,
„ Թուր-կէծակի՛ն,
„ Գլխու գեօտին,
„ Կապէն-խարուկին,
„ Քամարն ի մէջքին,
„ Մարուքթայ քանձրիկ Աստուարածին,
„ Խաչ-պատարագին, ինչ վար ա՞ թիւին“։
Դաւիթ ասաց.—Պառաւ, որտեղն ի։
—Քեռ տուն աւրի, քեռ խրոզքոր մօտն ի,
Համա խրոզքէր խաթրով չի՛ տալ էն բաներ։
Կ՛երթաս քեռ խրոզքոր փողպատ կըբռնես,
Կալնես զօրովէն կառնես։
Դաւիթ գնաց մօտ իւր խրոզքէր,
Զձեռ եթալ, խրոզքոր փողպատ բռնեց,

Թափ եւոու՝ ոտքեր գետնուց կորաւ։
Ասաց.—Խրօղբէր, կուգեմ քենէ
„ Մարուքթալ բանձրիկ Աստուարածին,
„ Իմ խօր Խաչ-պատարագին, ինչ վար աջ թեւին.
„ Քուռկիկ-Զալալին
„ Թուր-կէծակին,
„ Դլխու գեստին,
„ Քամարն ի մէջքին,
„ Կապէն-խաքուկին“,
Կրտաս՝ խաթրով տուր,
Զես ի տալ կայնեմ գօրովէն կառնեմ։
Խրօղբէր ասաց.—Դաւիթ, քեռ բերան կոտրէր.
Էն քեռ գիտցած բաներ չի, քե ուսաալ կայ։
Էն տարին, որ քեռ խէր մեռիր,
Զ Քուռկիկ-Զալալին տիւրս չեմ խանիր,
Սարամելքի յախուն մնացիր մընչ գոմին։
Մարամելքի յախուն տիւռ շարիր եմ,
Էնու խոտ, յարդ, գարին լէ լերդիսու եմ տուի։
Կ'երթաս, որ արժան ես՝ կարող ես,
Տիւռ վար քեզ կրրացուի։—
Դաւիթ գնաց քացու մ' եզար պատին, զպատ քանդեց։
Գնաց ձեռ տը տէր ձիան քամկին,
Զին աքուց մ' եւոու, չառեց Դաւթին,
Առեց պատին՝ պատ շրջուաւ։
Դաւիթ ելաց, գոռաց, ասաց.
— Ես ինչ անեմ, Քուռկիկ-Զալալին,
Ես գիտէր՝ որ տիւ ձիս ազատէր էսա կուուց։
Ասծու Հրամանքիւ ձին լեզու էկաւ, ասաց.
—Դաւիթ, որ էնպէս ի, ես քե՝ տիւ ձը տես.
Ինչ քեռ խէր մեռիր ի,

Քեռ խրօղբէրքեր ձի չի պախած,
Ձը գուսաղի [1]) պէս ի պախած.
Կ'ելնես, լաւ թիմաը ըմ կրտաս ձիս։
Դաւիթ էլաւ, ձեռ եռու ձիու քամկին.
Էնքան խաւեր ծրաած ին ձիու քամկին,
Մէկ թիզ ծերա էր ըռնի Քուռկիկ-Ջալալի քամկին։

Էլաւ, ձին քաշեց, խեծաւ,
Երեր, խրօղբոր դռան կալնեցցուց։
Խրօղբէր գնաց, երի գԹլխու գեօտին,
Քամարն ի մէջքին,
Կապէն-խարուկին,
Թուրն ի կէծակին.
Ասաց.—Դաւիթ, Խաչ-պատարագին,
Կեռ [2]) սանդղի միջին։
Կերթաս յէռջև սանդղին,
Քեռ չոքեր [3]) կըզարկես գեռին,
Քեռ Աստուած կը կանչես.
Թը տիւ լէ քեռ խոր պէս արդար մարդ ես,
Կ'ելնայ, կըկեայ վար քեռ թևին
Կրկայնի Խաչ-պատարագին։
Դաւիթ գնաց, չոքեր եզար գեռին, ելաց, գոռաց։
Աստու Հրամանքիւ Խաչ-պատարագին
Թռաւ էկաւ Դաւթի վար աջ թևին։

Խեծաւ գՔուռկիկ-Ջալալին,
Գլոխ եգի գլխու գեռին,
Խագաւ զկապէն-խարուկին,

1) Բանդարկեալ։ 2) Ահա։ 3) Ծունգեր։

Կապեց թուրն ի կէծակին,
Քամարն ի մէջքին։
Էնու քամար քառասուն փաթ էկաւ բոլոր [1]) մէջքին.
Թուր-կէծակին իջաւ գետնու քէշ [2]) կ'երթէր։
Գլխու գեօտին ընցկուն մեծ էկաւ,
Որ քառասուն լիտր բամբակ եդի մէջ,
Նոր էն գնաց գլխուն։
Էլաւ, տան քամկին կայնաւ,
Ականջ էրաւ, ասաց.
— Նայինք խրօղբէր ինչ տ'ասի։
Խրօղբէր ասաց.

„ Ափսոս, խազար ափսոս
Մըր Քուռկիկ-Ջալալին.
„ Ափսոս, խազար ափսոս
Մըր Գլխու գեօտին.
„ Ափսոս, խազար ափսոս
Մըր կապէն-խաբուկին.
„ Ափսոս, խազար ափսոս
Մըր Քամարն ի մէջքին.
„ Ափսոս, խազար ափսոս
Մըր Թուր-կէծակին.
„ Ափսոս, խազար ափսոս
Մըր Խաչ-պատարագին.
„ Ափսոս խազար ափսոս
Մըր Նորալիւկ [3]) մէկ տակ [4]) մանուկին [5])“։

— Խրօղբէր քեռ բերան կոտրէր, տիւ ձի չլիշէր.

---

1) շուրջ 2) գետնի հետ քարշ։ 3) Նորելուկ, մատաղահաս 4) մի հատիկ։
5) այս կտորն երգ է։

Որ տիւ ձի չէր յիշացեր,
Ցառաջ ես քե տը սպանէր, նոր երթէր կռուն։

Է

Ասաց, քշեց, գնաց մոչ դաշտին։
Առծու Հրամանքիւ ձին լեզու էկաւ, ասաց.
— Դաւիթ, կ'երթաս՝ քեռ խօր կամթնաղբուը կայ,
Որտեխ ես կայնեմ՝ վէ կըկեաս իմ քամկէն։—
Գնաց, կայնաւ վար կամթնաղբրին։
Դաւիթ մառացիր էր՝ վէ չեկաւ.
Գիտցաւ թը ձին գագրաւ.
Զանգուն [1]) եզար, ձիու կողաշար կոտրուեց։
Ձին ըռըկաւ, ասաց.
— Կարամ զքե տամ էրիքական՝ էրիցիս [2]).
Ինչպէսնր տիւ իմ խօսք շիւտ մոռացար—
Համա քեռ խօր խամթրին չեմ ի տայ։
Որ էստեխէն կ'երթաս,
Էրկըթէ սուն մը լէ կայ մընչ դաշտին տնկուած.
Քեռ թուր կը քաշես, էն սեան կըգարնես։
Թը քեռ թուր էն սուն կտրեց՝ կ'երթաս կռիւ,
Թը չկտրեց՝ յետ կըդառնաս։

Դաւիթ լէ վէր էկաւ,
Էն կամթնաղբրի ճիւր եռաւ ձիու կողաշար լուացաւ։
Էնտեխ ճիւր խմաւ, խաց կերաւ,
Ընկաւ վար էն կամթնաղբրին քնաւ։
Մէկ սհաթ քնաւ, էլաւ, տեսաւ,—
Տեսաւ էնպէսն ի լցուի,

1) Ասպանդակ. 2) Արեգակին՝ որ այրուիս։

Էնպիսն ի խաստացի,
Էնպէս ի զօրութիւն, ոժ [1] առի,
Որ չափալամիշ ի եղի։
Էլաւ, իւր գլխու գեստին՝
Էն քառսուն լիտր բամբակ, որ գրիր էր մէջ,
Տիւս էթալ, նոր էն գնաց գլխուն.
Թուր-կէծակին՝ գետնուց քէշ կ'երթէր՝
Կապէց, խասաւ խեա չոքերուն.
Քամարն ի մէջքին՝ որ քառսուն փաթ կրկէր մէջքին՝
Կապէց, մէկ փաթ էկաւ։
Էլաւ, գէին խեծաւ, քշեց, գնաց ի սեան մօտ.
Թուր քաշեց, եկար էն սեան,—թուր սուն կտրեց,
Կալամ վրը կալամին [2] կալնաւ,
Նուռ չառեց՝ որ իյնէր գետին։
Դաւիթ էլաց, ասաց.

„ Ձեռնի՞կ, տիւ կոտուր կենէր,
Որ զարկեցի, թուր չկտրեց.
„ Աչքի՞կ, տիւ խաւար կենէր,
Որ էսա բաներ ես չտեսնէր [3]“։

Ասաց,—ձեռ կոտրաւ, աչք խաւարաւ։
Ասծու հրամանքիւ ձին լեզու էկաւ, ասաց.
— Քեզ բերան կոտրուի, տէր իմ,
Քամի մ' ուգէ Ասծուց։
Դաւիթ երգեց, ասաց.

„ Օրհնալ, բարերար Ասուած [4],

---

[1] գրի [2] չիքա [3] [4] Աստ

Քեռ Հրամանքն էր շատ.
„ Հրամանք էնես հարաւ-քամին (ե՞ր) [1]) իջնէր,
Էսա սուն լէ լիրարուց կտոր էնէր “։

Ասծու Հրամանքիւ հարաւ-քամին՝ որ էկաւ,
Սուն շուռ ետուր, մէ կտոր էստեխ ընկաւ,
Մէ կտոր էնտեխ ընկաւ։ Ասաց.

„ Ձեռնի՞կ, տիւ կանաչ էլնէր,
„ Աչքի՞կ, տիւ լուսով էլնէր [2])՞։

Ասծու Հրամանքիւ ձեռ սաղացաւ,
Աչքեր լէ լուսաւորուան։

Ը.

Ձին խեծաւ, քշեց, գնաց,
Էլաւ լեռայ սարի գլուխ։
Ի՞նչ կըտեսնայ,—իրիշկեց՝
Որ քանի մ՝ աստղ երկինք կայ,
Մարամելիք ընցկուն չադը ը-խուաթ ածի մընչ գաշտին։
Դաւիթ որ տեսաւ՝ վախացաւ, ասաց.

„ Օրհնայ, բարերար Ասուած,
Քեռ Հրամանքն էր շատ.
Ես ի՞նչըխ [3]) անեմ։
„ Էնոնք էլնեն բամբակ (ե՞ր),

1) Ե՞ր-բացագանչութիւն երգի մէջ. 2) Երգ. 3) Ինչպէս։

Ես լէ էլնեմ կրակ (ե՞ր),
Չեմ կարայ զանոնք էրեցրցի.
„ Էնոնք էլնեն գարնան մատղաշ գառներ,
Ես լէ էլնեմ գարնան քաղցած գէլեր,
Չեմ կարայ զանոնք կորեցրցի՞»

Ձին ասաց.—Դաւիթ, մի վախենայ.
Քանի մ՚ քեռ թուր կարայ,
Ընդկուն իմ պոչով որ կորեմ զանոնք.
Քանի մ՚ քեռ թուր կարայ,
Ընդկուն լէ իմ աքուց որ կորի զանոնք.
Տիւ իմ քամկից վէ չկեաս, չխաբուիս։
Դաւիթ լէ ասաց՝—Ի՞նչխ անեմ, թը գեաղտիկ էրթամ,
Տ՚ասեն Դաւիթ գեող էկաւ. գեող գնաց.
Թը գեաղտիկ չերթամ, ես էնոնց մօտէն կըվախենամ։
Կանչեց, ասաց.

„ Վով քնիր էք՝ յարթուն կացէք.
„ Վով յարթուն էք՝ ելէք, կայնեցէք.
„ Վով կայնիր էք՝ ձի ճակեր [1]) կապեցէք.
„ Վով ձի ճակեր կապիր էք՝ ձի ձիանք թամքեցէք.
„ Վով ձի ձիանք թամքիր էք՝ ելէք խեճեցէք,
„ Ասէք՝ Դաւիթ գեող էկաւ, գեող գնաց [2]».

Ասաց, քշեց, գնաց մընչ ասքրին։
Երկու գլոխ գնաց, էկաւ,—
Արնէ խեղեղ էլաւ, էնոնց լէշեր տարաւ։

---

1) զրաՀներ. 2) Լեզ. Լ.

Քանի մ՝ Դաւիթ սպանեց,
Ընդկուն Դաւթի ձիու յէռչև կոտորուան։

Մէկ մեծ, փիր, ախոխար խալւոր [1]) ըմ կէր մէջքեր [2]).
Ասաց՝ ճամբախ տուէք էրթամ յէռչև Դաւթին,
Մէ խօսք ասեմ, էսա ասքեար ազատեմ կռուց։
Գնաց յէռչև Դաւթին, ասաց՝ „Դաւիթ փոշտ, փոշտ“։
Դաւիթ բարկցաւ, ասաց.—Փոշտ տիւ իս, խալւոր։
Տել [3]) ես տաս տարուան տղայ եմ.
Ի՞նչ փշտուիթիւն եմ արի՝ տու ձի փոշտ կ՝ասես։
Ասաց.— Դաւիթ, խոգուդ՝ արևուդ մեռնեմ.
Ես քե չեմ ասի փուշտ.
Մեր լեզուն թարս ի՝ ես կասեմ փոշտ,
Ցանի ճամբախ տուէք, Դաւիթ տեսնամ, խօսեմ խեռ։
Դաւիթ լէ ասաց.—Դէ խօսի։
—Դաւիթ, տիւ ընչու էսա մարդեր կըսպանես,
Ամեն մօր մէկ են.
Մարամելիք զորով ի բերի։
Որ տիւ կորիճ ես՝
Գնա, խեռ Մարամելքին կռիւ արա։
Դաւիթ ասաց.—Ոչ մէկն ի էնու չադրը։
Խալւոր ասաց.— Էնա ճուչ [4]) կանաչ չադրը

Թ.

Գնաց, Մարամելքի չադրի տիւռ դագրաւ [5]), ասաց.
—Մարամելիք կանչէք՝ իկեալ կռիւ անենք.
Անմախ ի՝ էնու մախ եմ բերի.
Անգրոզ ի՝ էնու գրոզ եմ բերի։

---

1) Ալևոր. 2) մէջքերում. 3) գեռ. 4) մեռ. 5) կանգնեց։

Դաւիթի մէր էլաւ, ասաց.
—Մսրամելիք քնած ի,
Եօթ օր կըքնի, տել էսա իրեք օր ի քնի։
Ասաց.—Ձեմ գիտի. տը խանէք վի՝ կռիւ անենք։
Էլան շիշ [1]) քցեցին կրակին,
Տուին Մսրամելքի ոտաց.
Մսրամելիք մրչ քնուն կանչեց, ասաց։
—Օ՞խ, շան գէլեր, իմ տեխ էսօր խօրօտ չիք շինի.
Լիւ կէր՝ ձիս կըկծեն։
Դաւիթ՝—Իլի վի՛ր, ասաց, —լիւ չի, ես իմ։
Մսրամելիք վիր չելաւ, էլ ըմ քնաւ։
Դոր [2]) գիւթնի խոփ կրակացցին,
Տուին Մսրամելքի ոտաց։
Մսրամելիք ասաց.
—Օ՞խ, շան գէլեր, իմ տեխ խօրօտ չիք շինի.
Լիւեր ձի կըկծեն։
Դաւիթ կանչեց, ասաց.
—Մսրամելիք, իլի վիր, ես տիւ կռիւ անենք։
Մսրամելիք իլաւ վիր։
Որ զԴաւիթ տեսաւ, փչեց—
Էնու մտքէ Դաւիթ տը թռնէր—ասաց.
—Դաւիթ, արի նատի՝ խաց ուտենք,
Խաբար տանք, նուր էլենք կռիւ անենք։—
Դաւիթ էրաւ ձիուց իջնէր՝ ձին կըփախնէր.
Ձին իմաստուն էր, գիտէր՝
Մսրամելիք գեաղտիկ քառասուն նիտ [3]) խուր [4]) էր փորի,
Երկըթէ թոռ քցի վար ըերնուն,
Թաղիներ [5]) փռի վար խորուն,
Որ Դաւիթ գէր, նատէր, ընկնէր մրչ խորուն։—

---

1) շամփուր։ 2) այս անգամ՝ 3) նետ, նետաչափ 4) խոր 5) Թաղեր։

ԶԴաւիթ խաբեցին, ձիուց բերին վէ.
Զին ըռիկ էրաւ, փախաւ,
Գնաց, էլաւ սարի գլոխ։
ԶԴաւիթ նստացուցին վար խորուն,
Ընկաւ մըչ խորուն, երկըթէ թոռ էկաւ յիրուր.
Մարամելիք ասաց.
— Ը՞ն էր, ինչ տը խեռ ձի կռիւ էնէր.
Թըխ կենայ էնտեխ, չուր ոսկորքեր փտի։

ժ

Զէնով-Յովան գշեր էրազ տեսաւ.
Մարայ ասող պայծառ էր,
Սասմայ ասող մժդաւիր էր [1]։
Քնուց էլաւ վիր, ասաց.—Կնիկ, իլի վիր.
Ես տեսայ Մարայ ասող պայծառ էր,
Սասմայ ասող մժդաւիր էր,—
Դաւիթ ձեռաց գնաց։
Կնիկ ասաց.—Ասուած քեռ տուն աւրի.
Քիւն քե կըքնես, էրազ հոլդին [2] կը տեսնաս։
Զէնով-Յովան էլ ըմ քնաւ.
Դոր էրազ տեսաւ Մարայ ասող շատ պայծառ էր,
Սասմայ ասող մժդաւիր էր, կեանքն էր [3], անցնէր։
Էլաւ վի՛ր, ասաց.—Կնիկ, իլի վիր.
Ես տեսայ Մարայ ասող շատ պայծառ,
Սասմայ ասող կեանքն էր անցնէր։
Կնիկ ասաց.—Քեռ տուն աւրի,
Տիւ ընչու չես քնայ.
Տիւ էսօր չթողիր ես քնէր։—
Զէնով-Յովան էլ ըմ քնաւ, դոր էրազ տեսաւ
Մարայ ասող էկաւ, Սասմայ ասող հետաւ կուլ։

1) մեծ այլանդակ, մեղրով պատառուկ։ 2) խալխ, [illegible] 3) [illegible] մեռցել։

Ասաց.—Կնիկ, իլի վի՛ր, Գաւիթ սպանեցին։
Կնիկ ասաց.— Օ՜խ, տիւ ընչու չես քնայ.
Ով գիտի վէր [1]) կնկան ծոց սառկի, քէֆ կանի։—
Զէնով-Յովան բռբկաւ.
Քացու մ՚ եզար կնկան.
Կնիկ էլաւ, ճրագ կպուց։
Զէնով-Յովան ասաց.
—Իմ ասպարները [2]) բի՛։—Կնիկ եբի։
Զէնով-Յովան խաղաւ,
Գնաց գոմի տիւռ եբաց,
Ձեռ ետու վար Սվտակ ձիու քամկին—
Սվտակ ձին փոր ետու գետին։
Ասաց.—Սվտակ ձին, յեֆ ձի կըտանես,
Գաւթի կռուն խասցնես։
Ձին ասաց.—Զուր խլիսուն։
Զէնով-Յովան ասաց.
— Հարամ ըլնի էնա իմ եմ [3]), որ տուիր եմ քե։
Գնաց ձեռ ետու Կարմիր ձիու քամկին—
Կարմիր ձին էլ փոր ետու գետին։
Ասաց. -Կարմիր ձին, յեֆ ձի կըտանես,
Գաւթի կռուն խասցնես։
Ասաց.—Զուր սնամ ըմ։
— Հարամ ըլնի իմ պախելը, որ քե սուխիր եմ։
Գոր գնաց, ձեռ ետու Սև ձիու քամկին—
Սև ձին փոր չետու գետին։
Զէնով-Յովան Սև ձիու գլուխ պագնեց,
Ասաց.—Սև՛ ձին, յեֆ ձի կըտանես,
Գաւթի կռուն խասցնես։
Ասաց.—Որ տու կարաս քե վար իմ քամկին բռնես,

1) Ոչ մ՚ 2) Զինք ու զրահ։ 3) Կիր։ ուսկիք։

Ոտգ թլեռ զանգուն
Զուր մէկ էլ ոտգ շուռ տաս մէկ էլ զանգուն,
Ես քե կբխասցնեմ Դաւթի կուռուն։

Զէնով-Յովան էլաւ, Սև ձին խեծաւ,
Ոտ եգիր զանգուն,
Զուր մէկ էլ ոտ շուռ եառուր մէկ էլ զանգուն—
Սև ձին խրեղէն էն—
Էլաւ՝ լեռայ սարի գլոխ կայնաւ։
Քուռկիկ-Զալալին Զէնով-Յովան տեսաւ,
Խրխնջալաւ էկաւ մօտ։
Զէնով վախացաւ,—ասաց.
— Դաւիթ սպանած ի, ձին փախի, էկի էստեխ։
Զէնով-Յովան կանչեց—
Զէն ընկաւ սար ու ձոր—
Ասաց.—Դաւիթ, յուստն իս,
Յիշա Մարութայ բանձր Աստուարածին,
Խաչ-պատարագին՝ ինչ վար քեռ աջ թևին։
Կանչեց՝ ձէն ընկաւ Դաւթի ականջ։
(Զասեռ՝ Դաւիթ տղայ էր,
Զիտէր [1]) էնու զորութիւն)։
Դաւիթ լսաւ, կանչեց, ասաց.
—Եա՛ Մարութայ բանձր Աստուարածին,
Խաչ-պատարագին՝ ինչ վար իմ աջ թևին։
Ասաց, գիր ըմ [2]) զինք թափ եառուր,
Ասծով զինչլի [3]) կտորքեր երկնուց էկան տակ։
Դաւիթ էլաւ, թռաւ, խորու քերան.
Մսրամելիք էլ չգիտցաւ մօտենալ։
Զէնով-Յովան կանչեց.—Դաւիթ, արի էստեխ։

---

1) չգիտէր 2) մի տեղամ 3) շղթայ։

Դաւիթ էնու կանչելով գնաց մօտ խրօղբէր,
Համա ձին ըռըկեր էր՝ չէր իկեալ ձեռ։
Զէնով-Ցոգան եահլամիշ անելաւ [1]) գնաց, եբի։
Դաւիթ խեծաւ, ասաց.
— Խրօղբէր, տիւ գնա տախ քաղաք,
Ես էրթամ Մսրամելքի կռիւ։

ԺԱ

Գնաց, խասաւ մօտ Մսրամելիք, ասաց.
— Մսրամելիք, էն տիր ձի խափեցիր,
Մկայ էլ ինչ ս՛անես։
Մսրամելիք ասաց.—Դ՝ արի [2]), նատի։
Ասաց.—Ես չեմ նատի, կռիւ անենք։
Մսրամելիք ասաց.
— Կռիւ գօրով, թը նօրթով [3]) ի։
Դաւիթ ասաց.—Նօրթով ի։
— Որ նօրթով ի, նօրաթ վիրն ի, ճուչ ես եմ, թը տիւ։
Դաւիթ ասաց.—Նօրաթ քեռնն ի։
Դաւիթ գնաց մէյդնու միջին կայնաւ։
Մսրամելիք գնաց, էկաւ, զիւր գեորգ եզար—
Թոգ դաղրաւ [4]) վար Դաւթին,
Էրիքական իրես ըռնեց—
Ասաց.—Դաւիթ խոզ էր, խոզ դարձաւ։
Դաւիթ ասաց.—Մսրամելիք, տել ես էստեխն եմ.
Գնա էլ ըմ զար քո դարը։
Մսրամելիք իրեք տիր եզար,
Թոգ եատաւ վար Դաւթին,
Ասաց՝ Դաւիթ խոզ էր, խոզ դարձաւ։
Որ թոգ իջաւ գետին, Դաւիթ ասաց.
— Մսրամելիք, կեա՛ ես էստեխն եմ.

1) [illegible] 2) դէ՛ [illegible] 3) հիրթով. 4) փոչին կանգնեց։

Դոր նոքաթ խասաւ ձի։
Մարամելիք ասաց.
— Դաւիթ, ես մոհլաթ [1]) կուզեմ քենէ։
Դաւիթ ասաց.—Ցինչ կուզես։
— Կ'ուզեմ, որ քառասուն գեաց խուր փորեմ։
Դաւիթ ասաց՝ Փորի։
Մարամելիք ասաց.
— Ես էրթամ, ընկնեմ մըչ խորուն,
Քառասուն ջաղցի քար քաշեմ վար իմ,
Քառասուն դրդաճ գոմշի կաշի լէ առնեմ,
Քցեմ վար ջաղցի քարին։
Դաւիթ ասաց.—Քցի.
Ընցկուն կուզես՝ արա։
Մարամելիք լէ ընցկուն ասաց՝ արեց։

Դաւիթ գնաց, էկաւ՝ որ գիւր գեորգ զարնէր,
Դաւթի մէր էկաւ յէռջև, ասաց.
— Զէ քե ծէծ [2]) եմ տուի,
Էգ մէկ դարբ ձի խաթեր։
Դաւիթ խաթր արեց։
Մէկ էլ գնաց էկաւ՝ տր զարնէր,
Դոր Մարամելքի քուր էկաւ յէռջև, ասաց.
Դաւիթ, ինչ տիւ տզայ էր,
Ես քե ընցկուն շլկիր եմ վար իմ քամկին.
Էգ մէկ դարբ ձի խաթեր։
Դաւիթ խաթր արեց։
Դաւիթ մնաց, Աստուած, էն մէկ դարբ։
Գնաց, որ էկաւ՝ տր զարնէր,

---

1) Միջոց։ 2) [illegible]

Մարամելքի քուր էլ ըմ էկաւ լէռջև, ասաց.
— Դաւիթ, էգ մէկ գարբ լէ տաս ձի խաթեր։
Ասաց.—Գնա՛ դէն, փուշտ գաղբ.
Ես եմ, Աստուած, էսա մէկ գարբ։

Դաւիթ գնաց, էկաւ,
Աստու անուն ետու,
Ցիշեց զՄարութալ բանձրիկ Աստուարածին,
Խաչ-պատարագին՝ ինչ վար իւր աջ թևին,
Զիւր մէկ գեորգ եզար։
Որ եզար, Աստու Հրամանքիւ,
Զքառասուն գոմշու կաշին կտրեց,
Քառասուն ջաղցի քար լէ կտրեց,
Մարամելքի գլխու գագաթ լէ կտրեց։
Մարամելքի կանչեց, ասաց.
—Դաւիթ, կեա՛ ես տել էստեխն եմ։
Դաւիթ ասաց.—Մարամելքի, քե թափ տուր մէկ։
Ինչ Մարամելքի գինք թափ ետուր,
Մէկ կտոր ընկաւ էստեխ, մէկ էնտեխ։
Դաւիթ զՄարամելքի ձախ . . . առեց
Եբեր, ետու խրոզբոր կնկան, ասաց.
— Խրոզբոր կնիկ, տիւ ձի չանայ տուիր էն օր.
Առ, կեա՛ բերիր եմ . . .
Կանես աչից դեղ, ինչ կանես՝ արա։
Զէնով-Յովան շատ ուրախացաւ,
Էնի կբսիրէր զԴաւիթ։

ԺԲ.

Մէկ տարի մ վրայ անցաւ,
Զէնով-Յովան ասաց.

— Դաւիթ, տիւ զմե ազատեցիր Սպամելքի ձեռէն.
Տ'երթամ, քե կնիկ ուզեմ։
Գնաց Զմշկիկ (Զմուցկիկ) Սուլթան ուզեց Դաւթի խամար։
Զմշկիկ Սուլթան լէ շատ գեղոզալ [1]) փէհլուան էր.
Տել չէր պսակուի։
Համա էրկու կազոզան [2]) էկան,
Խանգուլթ խաթուն Դաւթի խմար գեովացին։
Ասաց՝

„Թ'էնուր սիպկուլթեն կըխարցնես,
Քանց գարնան ձիւն սվտակ է, լգо [3]), սվտակ է.
„Թ'էնուր կակղուլթեն կը խարցնես,
Քանց բամբակ կակուղ է, լգо, կակուղ է.
„Թ'էնուր ընքներ կըխարցնես,
Ղալամով քաշիր ին, լգо, քաշիր ին.
„Թ'էնուր աչքեր կըխարցնես,
Չէնու կթխէներ [4]), լգо, չէնու կթխէներ.
„Թ'էնուր ճակտի լէնուլթ կըխարցնես,
Եօթ ակիւմ է, տել մէկ յաւել է, լագо, տել մէկ յաւել է"։

Դաւիթ էսա երգ լսեց, ասաց.
— Խրօղբէր, էլ չեմ էրթայ տախ Զմշկիկ Սուլթան,
Տ'երթամ տախ Խանգուլթ խաթուն։
— Խրօղբէր ասաց.—Դաւիթ, էսա եօթ տարի էլաւ,
Քառասուն փէհլիւան նստած ին յէռջև էնու տիւռ.
Տիւ լէ կ'երթաս յէռջև էնու փանջարին.

---

1) Գեղեցիկ։ 2) կազոզան-գուսան՝ թէ կազդուանցի, որովհետև հ. Սբ. վար. Խանգուլթ խաթունը Կազդուանում է նստում։ 3) բացագանչութիւն երգի մէջ։
4) չինի կթխայ-բաժակ։

Թը քե ադիա եռու՝ կ Երթաս,
Թը չեռու՝ կը գառնաս, կըկեաս։

ԺԳ

Դաւիթ զիւր ձին խեծաւ,
Փշեց, գնաց, չէրթև Խանգուրթ խաթնի փանջարին [1]։
Խանգուրթ խաթուն՝ որ աչք ընկաւ,
Զ'Դաւիթ տեսաւ՝ ուրախացաւ.
Ուրախուրթնէ խնձոր մ՝ եզար Դաւթին։
Դաւիթ զխնձոր բռնեց վար ձիուն,
Խնգացաւ վար խնձորին։
Առեց, քշեց, գնաց մոտ էնու գռնպանին։
Գռնպանի անուն Համտոլ էր.
Մէկ պռուկ կախուիր էր սրտին։
Դաւիթ՝ որ տեսաւ, վախացաւ —
Ինչ մօրէն ելիր էր, մարդու բարև չէր տուի,
Ցախու բարև եռու՝ Համտոլին։
Համտոլ լէ քառասուն տարի
Էնտեխ գռնպանութենն էր արի,
Մարդու բարև չէր առի,
Էնօր զ'Դաւիթ որ տեսաւ,
Վախացաւ, յախու զբարև առեց։
Դաւիթ ասաց.

— Ինչ մօրէն մեկնիր իմ,
Մարդու բարև չեմ տուի.
— Էսօր զ'Համտոլն եմ տեսի,
Ցախուց բարև եմ տուի,
Լգօ, յախուց բարև եմ տուի։

---

1) [illegible] 1) [illegible]

Համոզ ասաց.

Քառասուն տարի գոնպանութեն եմ արի [1],
Մարդու բարև չեմ առի.
Էսօր զԴաւիթն եմ տեսի,
Յախուց բարևն եմ առի,
Լգօ, յախուց բարևն եմ առի։

Դաւիթ ասաց.— Օրհնալ է Աստուած,
Զէ տիւ լէ յախուց իմ բարև ասար,
Թրիս ես լէ յախու քիզ բարև տամ։
Որ տիւ յախուց իմ բարև չառնէր,
Տ'ելնէր կեօլ [2], ընկնէր իմ սիրտ, ձի սպանէր։

Ընդկուն ասաց, քշեց գնաց.
Խասաւ էն քառասուն փէլիւանի մօտ։
Էն քառասուն փէհլիւան, Խանդուրթ խաթուն ասով,
Օխտը տարի էնտեխ նստիր էն.
Խանդուրթ խաթուն մարդու խօսք չէր տուի։
Որ Դաւիթ գնաց, Խանդուրթ խաթուն խնձոր եզար Դաւթին,
Էնոնք շատ ըուրկան, ասացին.
— Մենք եօթ տարի էստեխ ենք,
Մզի ադիա չեստու.
Սասմայ շաղկմակեր [3] Դաւիթ նուր էկաւ էստեխ,
Տել չի աեսի՝ խնձոր եզար էնոր վար ձիուն։
Դաւիթ գնաց, էնտեխ նստաւ։

---

1) [illegible] է. 2) վիշտ, դարդ։ 3) շաղկամ ուտուզ։

Բերին խաց քցին՝ որ ուտեն։—
Էնոնք գեաղտիկ սուֆրէն [1]) պատրաստիր են,
Ամեն մէկ գիւր թուր քցիր ի սուֆրի տակ։—
Եօթ տարուան նեան գինին բերին, դրին, խմեն։
Էնոնց թաս լէ քանց ճուչ տաշտ էր։
Մէկ լցին, տուին Դաւթին,—խմաւ,
Մէկ էլ լցին, տուին,—Դաւիթ ասաց.
— Աղբէրներ, եդպէս չը՛լնի,
Բերենք սրով [2]) խմենք.
Վով կը սարխոշնայ՝ [3]) թըխ պաուկի,
Վով չսարխոշնայ՝ թըխ քէֆ անի։—
Հրսպա էնոնք կարան խետ Դաւիթ գինի խմեն,
Եօթը տարուան նեան գինին։—
Խման, ամեն մէկ սարխոշցան,
Իրանց տեղեր պաուկան։
Դաւիթ իւր խզմաթքեարին [4]) ասաց.
— Էլի՛, էսա սուֆրէն վիրու,
Մեղք էսա խացեր կոխեն։
Պաուէն էլաւ, սուֆրէն վիրուց.
Տեսաւ ըմեն փէլուանի լեռջև թուր տկլորած,
Դրած սուրֆի տակին։
Դաւիթ ձեռ ետու, թրեր ըմեն ժողվեց,
Ետու ծնգան, կոտրտեց,
Ինչ որ մարդ բիւռ ըմ քիբրիթ կոտրի,
Ետու իւր ծառին, ասաց.
— Տար, թալ միր ձիու խուրջին.
Լաւ պողվատ-գամուր ի,
Էնենք միր ձիու նալ-բզմար [5]) լաւ ի։

---

1) Հացի սփռոց 2) կաբգով 3) հարբել։ 4) ծառայ
5) պայտ ու գամ։

ԺԴ.

Դաւիթ գշեր էլաւ, գնաց Խանդուիթ խաթնի տուն,
Էնոր կշտին պառկաւ չուր խլիսուն։
Խլիսուն էլաւ վիր՝ տ'երթէր, լուացուէր.
Խանդուիթ խաթուն ճիւր տարաւ, ըլից Դաւթի ձեռաց։
Դաւիթ գրկեց զ'Խանդուիթ խաթուն՝ տը պագնէր։
Խանդուիթ խաթուն չեթող պագնէր.
Բռնցքի մ' եդար Դաւթի բերան,
Արուն-արնճիւր բերնէն եթալ տիւս։
Դաւիթ ասաց.—Խանդուիթ խաթուն, կանչիր եմ Ասուած,
Չուր խլիսուն, քանի մ' ասող երկինք կայ,
Ընցկուն չադը՛ր-խևաթ բուլուր [1] քեռ քաղքին զարնեն,
Յրմեն քեռ խոր գլխու գուշման էլնեն։
Ինչ մրազ [2] էրաւ, Ասուած կատարեց։—
Էն ժամանակ արդար մարդ ին,
Ինչ մրազ էնին՝ Ասուած կը կատարէր։—

Չուր խլիսուն, քանի մ' ասող երկինք կայ,
Ընցկուն չադը՛ր-խևաթ բռնեցին
Բուլուր Խանդուիթ խաթնի խոր քաղքին,
Յրմեն Խանդուիթ խաթնի խոր գուշման։
Խլիսուն Խանդուիթ խաթուն ասաց.
— Վով տ'երթայ կռիւ։
Էն քառասուն փէհլուան ասացին.
— Վով տ'երթայ կռի՛ւ.
Ադիէն վիր տուիր ես՝ էն տ'երթայ կռիւ։
Թը կ'ուզես խաբար մի՛ տուր, մենք էրթանք կռիւ։
Դաւիթ խլիսուն էլաւ,

---

1) [illegible] 2) [illegible]

Զ Ֆուռկիկ-Զալալին խեծաւ, գնաց կռիւ։
Աջու եզար, ձախու եզար, կէս ասքար ջարդեց,
Ցիրկուն էկաւ մօտ Խանգուլթ խաթունն։
Մէկ 'լ օր էլ ըմ գնաց կռիւ.
Զկրցան Դաւթի կռիւ անեն։
Դուշմաններ խորհուրդ արին,
Հալալալ թագաւուր հրաղկեցին [1]) Սասմալ քաղաք,
Մօտ Զէնով-Յովան,
Ասացին.— Մենք լիմացիր ենք՝
Սասմալ քաղաք շատ կտրիճ փէհլուան կալ.
Մէկ փէհլուան ճամբխես իկեալ էստեխ,
Իսա տեխ մարդ ըմ կալ՝ շատ կտրիճ ի,
Էնոր սպանի՝ մենք քեզ եօթ քաղաք փէշքէշ [2]) կը տանք։

. . . . Վերգօն մէկ տղալ կէր,
Անուն Պարոն-Աստղիկ։
Պարոն-Աստղիկ Ձին խրեղէն խեծաւ,
Ձին թեւաւոր էր, մըչ երկինք, մըչ գետինք,
Թռաւ, գնաց, խասաւ կուռուն։
Դաւիթ լիմացաւ, ճանաչեց զՊարոն-Աստղիկ.
Ցիրկուն էկաւ, Խանգուլթ խաթնին ասաց.
— Ես վաղ չեմ էրթալ կռիւ։
Խանդուլթ խաթուն լէ ասաց.
— Որ տիւ չես ամաչի, ես կ'երթամ կռիւ։
Դաւիթ ասաց.— Դէ տիւ լերգըցի [3]),
Որ ես էրթամ կռիւ՝ տիւրս չելնես,
Տիւռ չրանաս, լերդիս [4]) չրանաս,
Նուր ես կ'երթամ կռիւ։

---

1) Ուղարկեցին. 2) ընծայ. 3) երգուիր. 4) երդիկ.

Խանդուքթ խաթուն ասաց
— Լաւ, ես չեմ էլնի տիւրս, իմ տիւռ կը շինեմ,
Նստեմ էստեղ, իմ քարգեահ քաշեմ։
Խլիսուն Դաւիթ էլաւ, գնաց կռիւ։

Դաւիթ գնաց, կռիւ արեց չուր կէսօրին,
Կռիւ արեց խեռ Պարոն-Աստղկան,
Թրէ շառաւիրք [1]) եզար մըչ յերդիսին։
Խանդուքթ խաթուն տեսաւ
Լիւս էկաւ մըչ էնու յոգին [2]),
Ասաց.— Էս ինչ բան ի.
Ամպ չի՝ անձրև չի կեայ.
Գշեր չի՝ կէծակ չի տայ։
Խանդուքթ խաթուն չդիմացաւ,
Էլաւ, փանջարէն եբաց, իրիշկեց.
Տեսաւ՝ մէկ մը ձին խրեղէն խեծի,
Վար Դաւթի գլխուն ինի կըֆուայ,
Ջշաւլունի թուր կը շարժէ,
Կրակ կըթափի վար Դաւթի գլխուն։
Խանդուքթ խաթուն իմաստուն կարդացող էր.
Գիրք եդի էնտեղ, գիրք կարդաց.
Տեսաւ՝ Դաւթի խրոզբոր տղէն էր,
Ինչ թուր կը շարժէր վար Դաւթի գլխուն,
Կրակ կըլցէր վար Դաւթին, կ'երթէր յանդիւնդք,
Դաւիթ էնոր բան չէր անի։
Խանդուքթ խաթուն երգեց, ասաց.

„ Խրոզբէր, աիւ եկիր բարով, խազար բարով.

1) Ճառաղայթներ, ցոլք 2) սենեակ.

„ Կրակ թափեցիր վար մեր Դաւթի գլխուն,
„ Կրակ թափեցիր վար մեր Դաւթի գլխուն,
„ (Լա) Տուն աւրեցիր Խանգուրթ խանմուն։“

Դաւիթ էնոր ձէն առեց, ասաց.
— Վայ, քես կնկան բախտ կտրի.
Ես գիտէր՝ տիւ չմնար տուն ինի։
Դաւիթ բռբկաւ,
Ձիւր նետ-անեղ դէմ էրաւ
Պարոն-Աստղկան ձիու փորուն,
Ձիու փոր ծակեց,
Պարոն-Աստղկան գլխու գագաթ վեր տիւս էտու։
Պարոն-Աստղիկ ընկաւ գետին, ձէն եառուր, ասաց.
— Ա՜խ, էս մեր ազգակնի գարբերն ի՝ ձի խասաւ։—
(Էնի չէր ճանաչի զԴաւիթ)։
Դաւիթ ասաց.—Տիւ վով իս։
— Ես Պարոն-Աստղիկ, Յռան-Վերգօ տղէն եմ։
Դաւիթ ասաց.
— Ես իմ աչքեր քոռցուցի.
Մեր ադաթ էն ի, վով մեռնի,
Գլոխ դնի վար ազգակնի ծնգան,
Խոգին տայ Աստուն։
Դաւիթ զՊարոն-Աստղկան
Գլոխ եդի վար իւր ծնգան,
Պարոն-Աստղիկ քռուց ընկաւ, խոգին եառաւ։
Որ Պարոն-Աստղիկ խոգին եառաւ,
Դաւթի յաշ [1]) գնաց,
Ասքեար էկան զԴաւիթ բռնեն։

1) Ուշք։

Դաւթի ձին, Քուռկիկ-Ջալալին,
Բուլուր Դաւթին կայնիր,
Ձեթոդ զԴաւթի բոնին,
Զուր Դաւթի յաշ էկաւ. գլխուն,
Էլաւ գձին խեծաւ, զօշուն [1]) ցրուեց։

ժե

Էնօր լիրկուն Դաւթի չեկաւ մօտ Խանդութի խաթուն։
Խանդութի խաթուն գիտցաւ, որ Դաւթի սպանիր են.
Խլիուն էլաւ, մարդու շորեր խաղաւ,
Զիւր ձին խեծաւ, զիւր սիլախներ [2]) կապեց, ասաց.
— Երթամ Դաւթի ջանգակ [3]) ջոկեմ, բերեմ թաղեմ։
Խանդութի խաթուն գնաց,
Զրա մ՝ կըգարնէր, լէշեր վերուցէր,
Որ Խաչ-պատարագին տեսնէր,
Դաւթի լէշ ճանաչէր։
Դաւթի էնտեխէն՝ շորեր փոխիր՝ էկաւ։
Էն զԽանդութի խաթուն կըճանաչէր.
Խանդութի խաթուն զԴաւթի չէր ճանաչէ։
Դաւթի ասաց.—Օ՜, վՔը յետև կան կըկեաս [4]).
Էն մարդ՝ ինչ տիւ կան կըկեաս,
Էն ես սպանիր եմ։
Խանդութի խաթուն ասաց.
—Որ տիւ զէն մարդ սպանիր ես,
Ես տիւ կռիւ տ՝ անենք.
Եա ես զքե տը սպանեմ էնու տեխ,
Եա տիւ ձի էլ սպանես։
Երկուս խաստան լիրուր, կռուան։

---

1) Զօրք. 2) զրահ. 3) դիակ. 4) ման կըգաս.

Դաւիթ գԽանդութ խաթուն եզար գետին.
Զոքեր եզար վար սրտին։
Խանդութ խաթուն ասաց.
— Աման, ձի մը՝ սպանի, ես կնիկ յարմատ եմ։
Դաւիթ ասաց.—Ես գիտեմ տիւ կնիկ յարմատ ես,
Էսիկ էն աւուր թիրէն,
Ինչ տիւ էն բռունցքին զարկիր իմ բերան,
Արուն-արնճիւր էկաւ տիւս։
Խանդութ խաթուն ասաց.—Դաւիթ, տիւ իս։
Դաւիթ ասաց.—Խա, ես իմ։
— Որ ընցկուն ի, ձիս թոդ։
Տեսար, Դաւիթ, քառսուն փէլիւան.
Եօթ տարի կայ՝ էնտեղ նստած,
Մարդու ադիա չտուի.
Ինչ տիւ էկար՝ քե տուի։
Դաւիթ, ձի թոդ տիւ,
Դոր ես քե կնիկ, տիւ ձի էրիկ։
Դաւիթ թոդ ետու։

Էլան, էկան Խանդութ խաթնի սարէն [1])։
Խանդութ խաթուն ասաց.
— Դաւիթ, էստեղ նստենք, ուտենք, խմենք, քէֆ անենք։
Դաւիթ ասաց.—Չէ, ես լէ Սասմայ քաղքի տէրն եմ.
Չէ, տ'երթանք Սասմայ քաղաք։—
Ինչ կէր, չկէր, բոլուր ծախեց.
Միւս քարուան կապեց, էկաւ տախ Սասմայ քաղաք։

Զմշկիկ Սուլթան էլաւ,

---

1) [illegible]

Էկաւ յէռջև Դաւիթին, ասաց.
— Դաւիթ, ընչու, ես խօրօտ չէ՞ր,
Չի ուզեցին քե, տիւ ձի չխաւնար,
Վար ձի գնացիր, Խանդուիթ խաթուն լերիր։
Դէ աբ՝ ես տիւ կռիւ անենք
Եա ես քե տը սպանեմ,
Ես լէ, Խանդուիթ խաթուն լէ մնանք որբաւարի.
Եա տիւ ձի սպանես ,
Նուր էրթաս Խանդուիթ խաթնի ծոց պառկես։
Դաւիթ ասաց.
— Զմշկիկ Սուլթան, հիւր՝ [2]) կ՝էնեմ քեռ մօտէն.
Կնիկ լարմատ կայ խետ ձի.
Թող ես էրթամ իմ տուն,
Ընչուր ուիթ օր լմանալ,
Ես կլկեամ քեռ կռիւ անեմ։
Զմշկիկ Սուլթան ասաց.
— Դէ լերդլուցի Մարուիթալ բանձր Աստուարածին,
Խաչ-պատարագին՝ ինչ վար քեռ ալ թևին,
Ինչ ուիթ օր լմանալ՝ ես կլկեամ քեռ կռիւ,—
Որ թողնեմ տիւ էրթաս։
Դաւիթ ասաց.
— Մարուիթալ բանձր Աստուարածին,
Խաչ-պատարագին,
Ինչ ուիթ օր լմանալ՝ ես կրկեամ քեռ կռիւ անեմ։
Ասաց, առեց զԽանդուիթ խաթուն,
Էկաւ Սասմալ քաղաք։
Ինչ Խանդուիթ խաթնի ծոց պառկաւ,
Խաչ-պատարագին, որ լերդում էր արի,
Մոռացաւ,—գնաց ուիթ տարի։

---

1) Աբի եւ. 2) խնդրեք.

ՄԷՀԵՐ.

Ա

Ինչ տարին թմբմաւ [1]),
Աստուած տղէ մ' ետու Դաւթին,
Անուն եդի Մէհեր։
Ինչ խալխի տղէք տարով կըմեծանին՝ Մէհեր օրով,
Ինչ ամսով՝ Մէհեր սհաթով։
Տարին որ թմբմաւ,
Մէհեր էլաւ, գնաց մըչ քաղքին կան կըգէր.
Զրարտի ծառեր կըկոռէր,
Քաղքի տղէք կըխեծուցէր,
Կըշարէր վար բարտու ծառին,
Ծառու ծէր կըթորկէր [2]։
Ինչ ծառը ծէր կըբարձրացնէր,
Քաղքի տղէք, ամեն մէկ ճիժ [3]),
Մէկ մահլայ [4]) կըթլէր։
Քաղքցիք էկան մօտ Դաւիթ, ասացին.
— Քեռ տղէն թամբեհ արա [5]։
Զմե աղից կտրեց։
Դաւիթ խրատեց, Մէհեր խօր ականջ չետուր։
Ծուչ գետ ըմ Սասմայ քաղքի յէռջևից կ'երթէր.
Մէհեր ութ ըլից՝ կարմունջ կապեց վար էն գետուն։

---

1) Լբացաւ, 2) բաց կը թոգնէր. 3) կրնկայ. 4) Թաղ. 5) խրատիր.

Որ մարդիկ կ'երթէն՝ վար կարմնջին ինի կ'երթէն,
Մհեր կ'երթէր, մարդեր կըտիր [1]), կ'ասէր.
— . . . որդիք, ես կարմունջ կապիր եմ,
Զի խամար եմ կապի.
Ընչու վար իմ կամրջին ինի կ'երթէք։
Մարդիկ կըդառնան, գին [2]),
Զարկին, ջրով ընցնին.
Մհեր կ'երթէր, կըտիր, կ'ասէր.
— . . . որդիք, ես կարմունջ կապիր եմ,
Զի խամար եմ կապի,
Տիւք ընչու կըտէք ջրուն,
Ծիւր գձե տանի, մեղք ընկնի իմ վիզ։
Փաղքցիք էլ մ' էկան մոտ Դաւիթ գանգատ։

Բ.

Դաւիթ գնաց զՄհեր տփեց,
Մէկ ճլիտի մ' եզար Մհերին։
Տղէն էլաւ Դաւթի փողպատ [3]),
Իէր, տղէն առան լիրուր,
Զարկեցին լիրարու։
Էնպէս կռիւ արին,
Թոզ էլաւ, էնոնք բռնեց.
Մընչ արընին կարմրցան։

Զուհափ տուին Խանդութ խաթնին, ասացին.
— Խանդութ խաթուն, իլի վիր.
Դաւիթ Մհեր լիրար առած՝ սպանեցին։
Խանդութ խաթուն էլաւ, իրիշկեց, —
Ի՞նչ իրիշկեց, տեսաւ.

---

1) կրծեցէր 2) գային. 3) հաքից բռնեց.

Տեսաւ՝ որ ինչ էրկու սար
Կ'երթան, կըկեան, գիպնին յիրար,
Էնպէս ի Դաւիթ, Մհեր առած յիրար։
Մարդ չէր կարայ մօտենայ.
Խանդուխթ խաթուն առեց կանչի, ասաց.

„ Դաւիթ, տիւ մը զարնէ [1]),
„ Դաւիթ, տիւ մը՝ զարնէ,
„ Միր նորալիւկ մէկ տակ մանուկին։“

Դաւիթ չը զարնէ,
Համա ընկի յիւր խոգու բառաւանչէն,
Ցիւր ախու կըզարնէ Մհերին։
Խանդուխթ խաթուն դոր ասաց.

„ Մհեր, տիւ մը զարնէ [1]),
„ Մհեր, տիւ մը՝ զարնէ
„ Միր թուխ մօրուս Դաւթին։“

Մհեր իսկի չլսաւ։
Խանդուխթ խաթուն դոր էրգեց.

„ Օրհնալ, բարերար Աստուած,
Քեռ Հրամանքն էր շատ.
„ Հրաման էնես՝ Գաբրէլ Հրեշտակ վէր իջնէր,
Խէր, տղեկ մէմէկից յիտ կտրէր։“

1) Նրդ. Մն.

Աստու հրամանքիւ Գաբրիէլ հրեշտակ վէր իջաւ,
Ձեռ ետու, գիսէր, ոդէն յիտ կորեց իրարուց,
Ինչ որ էրկու գիք [1]) կոուին,
Մէկ էրթայ յիտ կորայ։
Դաւիթ կանչեց, ասաց.
— Մահեր, որ տիւ խետ ձի կռիւ արիր,
Ձի ամանչըցրիր մընչ խալխին,
Կանչիր եմ քաղցրիկ Աստուած,
Քեռ մոտէն ժառանգ չընկնի տիւրս,
Քե մախ չըլնի, չուր Քրիստոս կեայ գատաստան։
Աստու հրամանքիւ,
Հրեշտակ Մահերի միջաց էրակ քաշեց,
Որ էնու մոտէն ժառանգ չընկնի տիւրս մընչ աշխարքին։

Գ.

Էս անէծք ետու, էլաւ, էկաւ տուն։
Ինչ կռիւ արին խետ Մահերին,
Մընչ արընին կարմրցիր էր.
Ասաց. — Խանգուիթ խաթուն, ճիւր ըի լուացուիմ։
Դաւիթ գիւր շորեր եխան՝ որ լուացուէր,
Աչք առեց վար իւր աջ թևին,
Խաչ-պատարագին սևացիր էր վար աջ թևին։
Ասաց.— Խանգուիթ խաթուն,
Էն չէր Մահերի դարբեր՝ կրգէր վար իմ գլխուն,
Էն Խաչ-պատարագին էր, ձի կրգարնէր։
Կնիկ, ես տ'երթամ տախ Զմշկիկ Սուլթան,
Յերդում արի ուիթ օր՝ գնաց ուիթ տարի։
Կնիկ, ես գնացի. . .

---

1) Ա[illegible]

Ասաց, էլաւ, խեծաւ զԲուռկիկ-Զալալին,
Գնաց, խասաւ յէռջև Զմշկիկ Սուլթանի սարին [1]։
Զմշկիկ Սուլթան տեսաւ,
Որ Դաւիթ գնաց յէռջև էնու սարին,—
Մտաւ, քիրէն [2] վառեց,
Գիւթնի խոփ եքից կրակին։
Դաւիթ մտաւ Զմշկիկ Սուլթանի բախչէն.
Զիւր խալաւքեր [3] եխան,
Մտաւ, մընչ Հաւուգին [4] լողացաւ։
Էլաւ տիւրս, իւր խալաւքեր տր խագնէր,
Զմշկիկ Սուլթան փանջարէն ինի
Զգիւթնի խոփ փոացրեց,
Եզար վար Դաւթի քամակին,
Սրտէն ինի ետու տիւրս։
Դաւիթ — տիւ, քեռ անուշ ջան սաղ ըլնի — մեռաւ։
Զուհափ ըերին Խանգուլթ խաթնին՝
Դաւիթ սպանուաւ առանց կռիւ։
Խանգուլթ խաթուն լէ մէկ թաս զէհիր [5] խմաւ,
Դաւթի կսկծու Խանգուլթ խաթուն լէ մեռաւ։

Գ

Մհեր մնաց հեթը մ։
Զէնով-Յովան զՄհեր տփեց,
Էլ չպախեց, ասաց.
— Մհեր, կոնգ ես, խետ քեռ խէր կռիւ արիր,
Իլի՛, գնա միր քաղքէն,
Մը գաղրի միր քաղաք։
Մհեր էլաւ, գնաց, վար խօր զերեզմնին կոյնաւ.
Եկաց, ասաց.

---

1) Ապարանք։ 2) քուրայ։ 3) շորեր։ 4) աւազան։ 5) [illegible]

„ Խէրիկ, վ՚ինչխ անեմ [1]),
„ Խէրիկ, վ՚ինչխ անեմ
„ Ասար ձի Սասմայ քաղքէն
„ Բեհրար ի խանած [2])"։

Ասծու հրամանքիւ ձէն ընկաւ խոր գերեզման,
Գերեզմնից ձէն էլաւ, ասաց.

„ Ուրդի՛, վ՚ինչխ անեմ, [1]),
Գացիր մէջալն [3]) ի ձէռնէս.
Գացիր մէջալն ի ձէռնէս,
Թափիր մազերն երեսէս։
Գնա Հալարայ քաղաք,
Լա՛, քեռ խաց ֆիխուկ է,
Լա՛, քեռ խաց ֆիխուկ է,
Քեռ կերակուր եփուկ է"։

Մհեր էնքան էլաց,
Էլ ձէն չելաւ խոր գերեզմնէն։
Դոր գնաց վար մոր գերեզմնին.
Էլաց, ասաց.

„ Մէրի՛կ, վ՚ինչխ անեմ [1]),
„ Մէրիկ, վ՚ինչխ անեմ,
„ Ասար ձի Սասմայ քաղքէն
„ Բեհրար ի խանած"։

---

1) Երգեր են. 2) աքսորած են 3) ժամանակ.

Աստու Հրամանքիւ ձէն ընկաւ մօր գերեզման,
Գերեզմնէն ձէն էլաւ, ասաց.

„Որդի՛, վ՚ինչխ անեմ [1]),
Գացիր դաւրանը ձեռնէս,
Գացիր դաւրանը ձեռնէս,
Թափիր մազերն ի գլխէս։
Գնա Հալաբայ քաղաք,
Լա, քեռ յոգէն աւլուկ է,
Լա, քեռ յոգէն աւլուկ է,
Քեռ շորեր փռուկ է“։

Էնքան ելաց, էլ ձէն չելաւ գերեզմնէն,
Էգա մէկ խօսք էլաւ։
Սասայ քաղքէն տիւս էլաւ, գնաց, ասաց.

„Ողորմած, բարերար Աստուած [1]),
Ես չեմ գիտի Հալաբայ քաղաք,
Ես չեմ գիտի Հալաբայ քաղաք,
Ես տել տղայ եմ, ես յուր էրթամ“։

Ե

Գնաց խասաւ մէկ ճամբէխի միջին,
Տեսաւ պառաւ մածնի շերեփ բռնի ձեռ, էկաւ։
Ս՚հեր ասաց.— Պառաւ, յուր տ՚երթաս։
Պառաւ ասաց.—Յուր տերթամ.
Ես լսիր իմ Դաւիթ ապանած ին,

1) Երգիր

Դաւիթ եօթ տղայ ձի սպանիր ի,
Ես լսիր իմ Դաւթին մէկ տղայ կայ՝ անուն Մհեր, — տ'երթամ
էրկու էսա մածնու շերեփով զարկեմ վար Մհերի գլխուն, սպա-
նեմ, որ իմ սիրտ խովնայ։
Մհեր էլաւ զպտուաւ բռնեց,
Ոտ եդի վար ոտաց,
Զպառաւ ճղեց, էրաւ էրկու կոտոր,
Եվթալ էնտեխ, գնաց։

Գնաց, տեսաւ մէկ տեղայց մուխ ըմ կ'ելնի։
Յէրի [1]) տակ էր. գնաց էն յէրի տակ։
Տեսաւ մէկ պառաւ նստի, խաց կըթխի.
Ծծեր թալիր վար թևքերուն,
Ծծեր ինչխ շան լակոտ յիրար կառնուն։
Մհեր վախացաւ, ասաց.
Թը գեաղտիկ թլլեմ, էնու ծծեր բռնեմ,
Տ'ելնի կեօլ, ընկնի մըչ իմ սրտին.
Թ'աշքեարայ անեմ, վախենամ էնի ձի յաղթի։
Քամկի տեխէն գեաղտիկ թլլեց,
Պառուս ծծեր բռնեց, քամեց.
Արուն, արնճիւր էկաւ տիւս ծծերաց։
Պառաւ ասաց.

— Ա՜խ, ես յիմացիր էր՝ Դաւիթ սպանիր են, էս Դաւթի
զարմի գարբերն ի ձի խասաւ։ — Ասաց. — Իմ ծծեր թուզ տուր,
մէկ աղջիկ ունիմ, անուն Դոհտոր խաթուն, եօթ տարի էլաւ՝
Հալաբայ թագաւոր թրի վրայ ի՝ չեմ ի տայ էնոր. թուզ
տուր, իմ աղջիկ տամ քե։

---

1) Ա. յը, քարայը։

Մհեր թուղ ետու։ Խարցրեց Հալաբայ քաղաք. գնաց քաղաք, էլաւ տէրտէրուչ մշակ։ Խինգ վեց օր մնաց, զօշում կը հաւաքեն. նօրաթ բերին վար տէրտէրուչ։ Տէրտէր ասաց.

— Ես տէրտէր եմ, ես ինչխ էրթամ կռիւ։—Մհեր ասաց.

— Տէրտէր, ես կ'երթամ։— Տէրտէր ասաց.

— Որդի, տիւ պզտիկ ես, տիւ կռիւ գնաս, զքե սպանեն, քեռ մեղք ընկնի իմ վիզ։

Խլիսուն Մհեր էլաւ վիր. մէկ անթարոց մ' եթալ յիւր թև, էլաւ, գնաց կռիւ։ Ձի չկար. տեսաւ, որ մէկ մեծաւոր էնտեխէն էկաւ։ Մհեր ասաց՝ Ես Մհեր ըլնիմ, ձի չունիմ։ Էգար էն մեծաւոր ձիուց երի տակ. էնու ձին խեծաւ, քշեց կռուու յառաջ։

Գոհար խաթուն՝ որ աչք ընկաւ, զՄհեր տեսաւ, ուրախութնէ փախաւ լեռչև, գնաց, մտաւ յիւր սարէն։ Մհեր լէ գնաց, մտաւ էնտեխ։ Կերան, խման, իրանց քէֆ արին չուր խլիսուն։

Խլիսուն Գոհար խաթուն ասաց.

— Մհեր, գնա, Հալաբայ թագաւորին ասա՝ Գոհար եկի ռայիգ. Գոհար խաթուն կ'ասէր՝ Ինչքան մարդ էնու քաղաք կայ, կեան իմ խել. վով կարայ քթէլ վերուցի, չմնայ քաղաք։ Որ ով կարայ քթէլ վերուցի՝ չկեայ, ես չեմ իկեայ։

Մհեր գնաց, ասաց Հալաբայ թագաւորին, էկաւ մտ Գոհար խաթուն։

Հալաբայ թագաւորի տալալ ընկաւ քաղաք, կանչեց, ասաց.

— Հայ հէյ, վով կարայ քթէլ վերուցի, կեայ թագաւորի խել։

Գոհար խաթուն Մհերին ասաց.

— Ինչուր էնու խելու հիտ [1]) քաղքէն կտրի, տիւ գնա, լե-

1) Հետ։

տնանց գար, կարի, ես լէ յառջևանց գարկեմ, կարեմ։

Մհեր գնաց։ Որ խելին հիտ քաղքէն կարաւ, մախսուզ մնաց յիտուց, առ ևս սպանել։ Գոհար խաթուն յէռջևուց սպանեց. չուր Գոհար խաթուն՝ Մհեր առան յիրար։ Աւքեար ըմեն կոտորեցին, գնացին, մտան Գոհար խաթնի սարէն։

Մհեր եօթ օր, եօթ գիշեր գիւր խարոնիս էրաւ։

2

Քառասուն տարի անցաւ, Գոհար խաթուն մեռաւ։ Մհեր էլաւ գիւր ձին խեծաւ, գնաց նէճիր անէր։ Նէճիրուանքտեր զՄհեր բռնեցին, տարան թլեցին խուր վէ։

Մէկ շիւար պառուուն բան չկէր, մէկ աղջիկ կէր։ Պառաւ ասաց՝ Իմ աղջիկ տանեմ, քցեմ խուր վէ մօտ Մհեր, որ իմ աղջկան մօտէն տդէ մ ելնի, ելնի փէհլուանութիւն անի, մենք լէ ապրինք։ Պառաւ առաւ գիւր աղջիկ, տարաւ, եթալ խուր վէ մօտ Մհեր։ Մհեր զաղջիկ ճղեց, էրաւ էրկու կտոր, թալ վեր։ Էլաւ գշրիդ [1]) պառաւու աղջկան մէջքէն արձրկեց, կապեց յիւր մէջք, ասաց՝ Մարէ [2]) ձի քաշէ տիւրու։ Մհեր շատ ծանդր էր. պառաւ չէր գիտի Մհերն էր, ասաց՝ Մհեր, քեռ շընորհքին մեռնեմ, ի՞նչխ իմ աղջիկ շուտով ընցկուն ծանդրացաւ։ Քաշեց, եխան խորու ներան, տեսաւ՝ Մհերն էր, ճանկուերով էկաւ տախ Մհեր, ուզէր թլէր մինչ խորուն զՄհեր,—չկրցաւ թլել։ Մհեր էլաւ զպառաւ լէ եթալ մընչ խորուն, սալ եդի վար բերնին։

Մհեր էլաւ, կ'ուզէր որ գնայ,
Որ զոտքեր կրթլէր՝ կ'երթէր մընչ խողուն,
Խոզ յէռջև թուլացիր էր,

1) Պարան 2) մայրիկ։

Չէր գադրի յէոջև Մհերին։
Գնաց, մտաւ Խլաթայ յէրի տակ։
Քանի մ՝ օր անցաւ, մէկ մարդ ձիաւոր իրի [1]).
Մհեր գնաց, էնու ձին խլեց.
Էլաւ, զձին խեծաւ,
Կուզէր էլ ըմ փէհլուանութիւն անէր։
Ձին խեծաւ, քշեց մընչ դաշտին,
Գետին յէոջև թուլացիր էր,
Ձին կըխրուէր մընչ խոզին,
Խոզ չէր գադրի յէոջև Մհերին։

Մհեր քանի տարի Խլաթայ յէրի տակ ազատ էրաւ, ասաց.

Ո՞վ Տէր Աստուած,
Իմ խօր անէծք ձի խասիր ի,
Իմ միջաց էրակ քաշիր ի,
Իմ մատէն ժառանգ չընկաւ մըչ աշխարքին.
Ձի էլ մախ չկայ, չուր Քրիստոս կեայ դատաստան։
Ո՞վ Տէր Աստուած, զքիզ եմ կանչիր.
Տիւ ընցկուն էնես, ձի ձգես Վանայ քար,
Չուր Քրիստոս կեայ դատաստան,
Իմ խոգու ճարը էնի՞։

Աստուած հրամանք էրաւ,
Չէնիկ մարմնաւոր եթալ Վանայ քար,
Չուր Քրիստոս կեայ դատաստան։

---

1 Եկ.

Կ'ասեն՝ ամեն խամբարձման գիշեր Մհերի քարի տիւռ կըբացուի. մարդ չի տեսնէ, հրամանք չկայ մարդ տեսնայ։ Մէկ տարուան խարս ի տեսի։ Էն խարս կով բերի նախիր, որթիկ փախիր, լիտև որժկան գացիր, ընկիր էն քար։ Քարի տիւռ բացուի, Մհեր քարի միջէն ելիր ի։ Խարս էկի տուն խաբար տուի. չուր գացած ի էնտեխ, տիւռ փակուիր ի։—

Էլ հրամանք չկայ մարդ տեսնայ,
Զուր Քրիստոս կեայ դատաստան։



„ԹԻԼԱՆ ԴԱՒԻԹԻ“ ճիւղից.

(Հատուած)

Մոկացու պատմելով՝ սոյն Դաւիթի առանձնայատկութիւնն է եղել լաւ թռչել, ցատկել, ուստի և կոչուել է „Թռչան Դաւիթ“։ Մինչև իսկ երեխայ ժամանակ, երբոր ծնողները նրան ձեռքերին խաղացնելիս են եղել, նա դէպի վերև՝ երկինք է թռչում և էլի իջնում եղել։

Զ Մարութայ բռնձը Աստուարածին Դաւիթ որ նորոգիր էր, դրիր էր միջին քառասուն եպիսկոպոս, քառասուն վարդապետ, քառասուն աւագ սարկաւագ, քառասուն սարկաւագ։ Ինոնց թաղին [1]) կըտէր, որ էնտեղ ուտեն, ժամ-պատարագ էնեն, դողայ [2]) էնեն Աստուց։ Դաւիթ լէ գնացիր էր քէֆ անելու խետ ազապ աղջկտերաց։

Սրամելիք էկաւ վար Աստուարածնին, քակեց, աւիրեց. սպանեց զքառասուն վարդապետ, քառասուն աւագ սարկաւագ, քառասուն սարկաւագ։ Մէկ սարկաւագ մենակ ազատուիր էր, մտիր էր լէշերու տակ։ Էն սարկաւագ էլաւ, ժամու շապիկ թաթխեց մընչ արընին, առեց, էկաւ մօտ Դաւիթ։ Դաւիթ նստիր էր, եօթ տարուան նռան գինին կըխմէր խետ ազապ լոճերուն [3]), աղջկտերուն։ Սարկաւագ երգեց, ասաց.

---

1) Ապրուստ 2) խղրուածք. 3) ապանները.

„Դաւիթ, վի՛ր իլի, Դաւիթ, վի՛ր իլի.
Սպանած ին քառասուն եպիսկոպոս,
Սպանած ին քառասուն վարդապետ,
Սպանած ին քառասուն աւագ սարկաւագ,
Սպանած ին քառասուն սարկաւագ.
Դաւիթ, վի՛ր իլի, Դաւիթ, վի՛ր իլի“։

Դաւիթ զսարկաւագ տեսաւ, ասաց.
— Յշկացէ՛ք [1]), իմ սարկաւագ եկիր ի, Աստուարածնայ ինչն ի պակաս՝ կ՚ուզի, խունկն ի պակաս, թէ ձէթը։ Սարկաւագ ասաց.
— Ոչ խունկն ի պակաս, ոչ ձէթը։
Ընդկուն ասաց, Դաւիթ՝ սարխոշ էր՝ չլսաւ։ Սարկաւագ ժամու շապիկ՝ ինչ թաթխիր էր մըչ արընին, թալեց յէռջև Դաւթին։ Դաւիթ՝ որ տեսաւ՝ էնու բարկութիւն էկաւ. էլաւ, կայնաւ, ասաց.
— Ազասլ լաճեր, ազասլ աղջկտերք. կերէք, խմէք, քէֆ արէք, ես գնացի։
Դաւիթ էլաւ, գնաց, տեսաւ, որ Մարամելիք եկիր ի, զՄարութայ բանձր Աստուարածին քակիր ի։ Ձեռ ձգեց, մէկ երկար ըարտու ծառ քաշեց, գնաց վար Մարայ քաղքին։ Մարամելքի ասքեար ըմեն ոպանեց, զքաղաք աւիրեց։ Մէկ կատու մ՚ պրծաւ, թռաւ, էլաւ, նմիրին [2]) գլոխ. մէկ ծառ քաշեց, ետու պալանարակ, էն կատուն էլ երի տակ։
Դարձաւ, էկաւ, էլ ըմ զՄարութայ բանձր Աստուարածին նորոգեց։

1) Նոտիկ։ 2) Փեղկի։

Դարձի և Ոչներ . . . . . 35 Կոպ.
Ամուշներ . . . . . 40 —"—

Ստացվում են Շուշիում, պ. Թ. Աղախանեանցի գեղավաճառանոցում։